



**"ՀՀ Արարատի մարզի հ. Մխչյան,
Մխչյան-Յովտաշեն ճանապարհի 1
հողամասում գյուղմթերքների շուկա,
առևտրի և սպասարկման կենտրոնի
կառուցման" աշխատանքային
Նախագծի**

**Շրջակա միջավայրի վրա ազդեցության
Նախնական գնահատման հայտ**

Հոկտեմբեր, 2019թ.

Պատվիրատու՝ Սարգիս Ներսիսյան

**Մշակող՝
"ԷՅ ԹԻ ԷՄ ԷՍ Սոլյուշնս" ՍՊԸ**



ATMS Solutions

"ԷՅ ԹԻ ԷՄ ԷՍ Սոլյուշնս" ՍՊԸ
Հայաստան, Երևան, 0010
Հանրապետության Հրապարակ
Վ. Սարգսյան 26/3, գրասենյակ 713 Յեռ.
+37410 583643, Բջջ. +37499 109495
info@atms.am, www.atms.am



"ՀՀ Արարատի մարզի Հ. Մխչյան, Մխչյան-Յովտաշեն ճանապարհի 1 հողամասում գյուղմթերքների շուկա, առևտրի և սպասարկման կենտրոնի կառուցման" աշխատանքային նախագիծ

Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

"ՀՀ Արարատի մարզի Հ. Մխչյան, Մխչյան-Յովտաշեն ճանապարհի 1 հողամասում գյուղմթերքների շուկա, առևտրի և սպասարկման կենտրոնի կառուցման"

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԾԻ

Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

"ԷՅ ԹԻ ԷՄ ԷՍ Սոլյուշնս" ՍՊԸ տնօրեն _____ Ա. Տեր-Թորոսյան

" ____ " _____ 2019թ.

"ԷՅ ԹԻ ԷՄ ԷՍ Սոլյուշնս" ՍՊԸ

Հայաստան, Երևան, 0010
Հանրապետության Հրապարակ
Վ. Սարգսյան 26/3, 7-րդ հարկ
Գրասենյակ 713
Հեռ.՝ +37410 583643
Բջջ.՝ +37499 109495
info@atms.am
www.atms.am



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ.....	4
2.	ՀԱՊԱԿՈՒՄՆԵՐ	4
3.	ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ՀԻՄՆԱԿՈՐՈՒՄԸ	5
4.	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ԿՐԱ ԱՉԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎԱԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏԸ	5
5.	ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ	8
5.1	Նախատեսվող գործունեության հողատարածքը.....	10
5.2	Գյուղմթերքների շուկայի, առևտրի և սպասարկման կենտրոնի տեխնիկական բնութագրերը.....	12
6.	ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ	23
7.	ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԸ.....	25
8.	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ.....	26
8.1	Նախատեսվող գործունեության տարածաշրջանի ֆիզիկա-աշխարհագրական նկարագիրը և ռելիեֆը.....	26
8.2	Տարածաշրջանի երկրաբանությունը.....	26
8.3	Հիդրոերկրաբանություն	27
8.4	Սեյսմատեկտոնիկ և սողանքային պայմաններ	29
8.5	Տարածաշրջանի հողերի նկարագիրը	30
8.6	Կլիման և օդերևութաբանական պայմանները	31
8.6.1	Ջերմաստիճանը.....	31
8.6.2	Խոնավությունը	31
8.6.3	Մթնոլորտային տեղումները.....	31
8.6.4	Քամի	32
8.7	Նախատեսվող գործունեության տարածաշրջանի բուսական աշխարհը.....	33
8.8	Նախատեսվող գործունեության տարածաշրջանի կենդանական աշխարհը.....	35
8.9	Տարածաշրջանի հատուկ պահպանվող տարածքները	38
8.10	Նախատեսվող գործունեության տարածաշրջանի համայնքների նկարագիրը և սոցիալ տնտեսական վիճակը.....	40
8.11	Պատմամշակութային և բնության հուշարձանները.....	42
9.	ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ	43
	Հավելվածների մաս.....	45



1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

1.1	Պատվիրատու՝	Սարգիս Ներսիսյան
1.2	Ձեռնարկող՝	Սարգիս Ներսիսյան
1.3	Ձեռնարկողի փաստացի գործունեության հասցեն՝	Արարատի մարզ, համայնք Մխչյան՝ Մխչյան-Հովտաշեն ճանապարհի 1 հողամաս
1.4	Նախատեսվող գործունեության վարչական տարածքը՝	Գյուղմթերքների շուկան, առևտրի և սպասարկման կենտրոնը կառուցվելու է ՀՀ Արարատի մարզի Մխչյան համայնքում՝ Մխչյան-Հովտաշեն ճանապարհի 1 հողամասի տարածքում (Նկար 1)
1.5	Հիմնական գործունեության տեսակը՝	Առևտրային գործունեություն
1.6	Ձեռնարկողի հեռախոսահամարը՝	+37477 192072
	Աշխատանքային նախագծի մշակող՝	"Գ.Վ. Շիննախագիծ" ՍՊԸ, Լիցենզիա № 10927-04-1.2Ի
	Աշխատանքային նախագծի փորձաքննության իրականացնող՝	"Արման-Երեմ" ՍՊԸ, Լիցենզիա № 16992
1.7	Նախնական գնահատման հայտի մշակող՝	"ԷՅ ԹԻ ԷՄ ԷՍ Սոլյուշնս" ՍՊԸ

2. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ՀՀ՝	Հայաստանի Հանրապետություն
ՍՊԸ՝	Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերություն



3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Իրականացվող գործունեության նպատակն է ՀՀ Արարատի մարզի Մխչյան համայնքում՝ Մխչյան-Հովտաշեն ճանապարհի 1 հողամասի տարածքում կառուցել գյուղմթերքների շուկա, առևտրի և սպասարկման կենտրոն: Աշխատանքային նախագիծը մշակվել է "Գ.Վ. Շիննախագիծ" ՍՊԸ-ի կողմից, հողասեփականատիրոջ/ձեռնարկող՝ Սարգիս Ներսիսյանի պատվերով:

2014թ.-ի հունիսի 21-ին ընդունված "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի 7-րդ ենթակետի համաձայն, քաղաքաշինության բնագավառում՝ 1500 մ²-ից ավելի կառուցապատման մակերեսով քաղաքաշինական օբյեկտները ենթակա են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության՝ Գ կատեգորիայի նախատեսվող գործունեության տեսակների համար սահմանված ընթացակարգով:

4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎԱԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏԸ

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության հիմնական պահանջները սահմանված են 21.06.2014 թ.-ին ընդունված "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքով: Այն կարգավորում է շրջակա միջավայրի վրա հիմնադրույթային փաստաթղթի և նախատեսվող գործունեության ազդեցության փորձաքննության իրավական, տնտեսական և կազմակերպական հիմունքները:

"Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքը

Օրենքը նկարագրում է Հայաստանում տարաբնույթ ծրագրերի և գործունեությունների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (այսուհետ՝ ՇՄԱԳ) և բնապահպանական փորձաքննության գործընթացները: Օրենքում օգտագործվող հիմնական սահմանումները բերված են հոդված 4-ում: Օրենքի հիմնական առարկաներն են՝

- Հիմնադրույթային փաստաթուղթը՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող փաստաթղթի (քաղաքականություն, ռազմավարություն, հայեցակարգ, ուրվագիծ, բնական ռեսուրսների օգտագործման սխեմա, ծրագիր, հատակագիծ, քաղաքաշինական ծրագրային փաստաթուղթ) նախագիծ:
- Նախատեսվող գործունեությունը՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող ուսումնասիրություն, արտադրություն, կառուցում, շահագործում, վերակառուցում, ընդլայնում, տեխնիկական և տեխնոլոգիական վերազինում, վերապրոֆիլավորում, կոնսերվացում, տեղափոխում, լուծարում, փակում:

Օրենքի հոդված 6-ը սահմանում է գնահատման և փորձաքննության նպատակն ու խնդիրները, իսկ հոդված 7-ը թվարկում է ՇՄԱԳ և փորձաքննության գործընթացում դիտարկվող շրջակա միջավայրի օբյեկտները և բնութագրերը: Օրենքի գլուխ 2-ը (8-13 հոդվածները) նկարագրում են ՇՄԱԳ և փորձաքննության գործընթացի հիմնական մասնակիցների լիազորությունները:



Հողված 14-ը թվարկում է ՇՄԱԳ և փորձաքննության ենթակա հիմնադրությային փաստաթղթերի բնագավառները և նախատեսվող գործունեությունների տեսակները, որոնք ըստ բնագավառների դասակարգվում են Ա, Բ և Գ կատեգորիայի ըստ շրջակա միջավայրի վրա նվազող աստիճանի:

Օրենքի հողված 16-ի համաձայն նախատեսվող գործունեությունների փորձաքննությունն իրականացվում է երկու փուլով՝ նախնական և հիմնական: Նախնական փուլում կազմվում է նախատեսվող գործունեության գնահատման նախնական հայտը, որի փորձաքննության հիման վրա (Ա կամ Բ կատեգորիայի գործունեության դեպքում) կազմվում է տեխնիկական առաջադրանք, ինչը հիմք է ծառայում ՇՄԱԳ հաշվետվության մշակման համար: Նախնական փորձաքննության տևողությունն է 30 աշխատանքային օր: Եթե փորձաքննության ընթացքում որոշվում է, որ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Գ կատեգորիայի, ապա ձեռնարկողին նախնական գնահատման հայտի հիման վրա տրվում է փորձաքննության եզրակացություն:

Հողված 18-ը սահմանում է հիմնադրությային փաստաթղթի ազդեցության ռազմավարական գնահատման հաշվետվության և նախատեսվող գործունեության ՇՄԱԳ հաշվետվության բովանդակությանը ներկայացվող պահանջները: Հողված 19-ը նկարագրում է փորձաքննության հիմնական փուլը: Սույն հողվածի 4-րդ կետի համաձայն փորձաքննության հիմնական փուլի ժամկետները չպետք է գերազանցեն հիմնադրությային փաստաթղթի և նախատեսվող գործունեության Ա կատեգորիայի դիպքում մինչև 60 աշխատանքային օր, իսկ նախատեսվող գործունեության Բ կատեգորիայի դիպքում մինչև 40 աշխատանքային օր:

Օրենքի հողված 26-ը սահմանում է ՇՄԱԳ և փորձաքննության ընթացքում հանրային ծանուցմանը և քննարկումների իրականացմանը ներկայացվող պահանջները: Հանրության ծանուցումը իրականացվում է մինչև լուսմները կամ քննարկումները առնվազն 7 աշխատանքային օր առաջ զանգվածային լրատվամիջոցներով, հայտարարություններով և էլեկտրոնային փոստով: Հանրային ծանուցումը և քննարկումները իրականացվում են 19.11.2014 թ.-ի ՀՀ կառավարության "Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին" թիվ 1325-Ն որոշմամբ:

"Թափոնների մասին" ՀՀ օրենքը (2004 թ.) սահմանում է թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, ինչպես նաև բնական ռեսուրսների, մարդու կյանքի և առողջության վրա թափոններից առաջացող բացասական ազդեցությունների կանխարգելման համար իրավական և տնտեսական հիմքերը: Օրենքի 3-րդ գլուխը նկարագրում է թափոնների նորմավորման, հաշվառման, անձնագրավորման ընթացակարգերը: Օրենքում ներկայացված են նաև ոլորտի պետական լիազորված մարմինների իրավասությունները, ինչպես նաև թափոնների գործածության ոլորտում ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքներն ու պարտականությունները: Օրենքի կիրարկումն ապահովվում է մի շարք կառավարության որոշումների և բնապահպանության նախարարի հրամաններով: Մասնավորապես արտադրության և սպառման թափոնների դասակարգումը ըստ վտանգավորության դասի իրականացվում է ՀՀ բնապահպանության նախարարի 2006 թ.-ի հոկտեմբերի 26-ի "ՀՀ տարածքում գոյացող արտադրության և սպառման թափոնների ցանկը հաստատելու մասին" հրամանի համաձայն:

"Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին" ՀՀ օրենքը (2006 թ.) կարգավորում է ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող էկոհամակարգերի, բնության համալիրների ու առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները: Օրենքը դասակարգում է



ՀՀ-ում հատուկ պահպանվող տարածքները. ա) ըստ նշանակության (միջազգային, հանրապետական և տեղական բնության հատուկ պահպանվող տարածքների) և բ) ըստ կատեգորիայի (պետական արգելոցի, ազգային պարկի, պետական արգելավայրի և բնության հուշարձանի):

Օրենքը նկարագրում է բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության ռեժիմները, պահպանության իրականացումը, օգտագործումը և վերահսկողությունը, սահմանում է պետական մարմինների իրավասությունները, ինչպես նաև բնության հատուկ պահպանվող տարածքներն օգտագործողների իրավունքներն ու պարտականությունները:

"Մթնոլորտային օդի պահպանության մասին" ՀՀ օրենքը (1999 թ, լրամշակվել է 2007 թ.) կարգավորում է արտանետման թույլտվությունները և սահմանում է մթնոլորտային օդի աղտոտման սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները: Աշխատավայրերում, բնակելի և հասարակական վայրերում, բնակարանային տնտեսություններում, ինչպես նաև շինարարական հրապարակներում աղմուկի թույլատրելի սահմանային նորմերը սահմանվում են ենթաօրենսդրական ակտերով: Դրանցից են՝ ՀՀ կառավարության "Մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործությունների պետական հաշվառման կարգը հաստատելու մասին" թիվ 259, "Մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների և ֆիզիկական վնասակար ներգործությունների սահմանային թույլատրելի մակարդակների նորմատիվների և արտանետումներ կատարելու թույլտվություններ տալու մասին" թիվ 192 և "Բնակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների - ՍԹԿ) և Հայաստանի Հանրապետության տարածքում շահագործվող ավտոտրանսպորտային միջոցների բանաժ գազերում վնասակար նյութերի պարունակության սահմանային թույլատրելի նորմատիվները հաստատելու մասին" թիվ 160-Ն որոշումները:

ՀՀ Հողային օրենսգիրքը (2001 թ.) սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսավարման տարբեր կազմակերպական-իրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը: Համաձայն Օրենսգրքի ՀՀ հողային ֆոնդը դասակարգվում է ըստ հետևյալ կատեգորիաների. 1) գյուղատնտեսական նշանակության, 2) բնակավայրերի, 3) արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, 4) էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների, 5) հատուկ պահպանվող տարածքների, 6) հատուկ նշանակության, 7) անտառային, 8) ջրային և 9) պահուստային հողերի:

Օրենսգրքի Գլուխ 6-ը նկարագրում է էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերը և դրանց հետ գործածությանը վերաբերվող ընդհանուր դրույթները:

"Բուսական աշխարհի մասին" (1999 թ.) և **"Կենդանական աշխարհի մասին"** (2000 թ.) ՀՀ օրենքները սահմանում են ՀՀ բույսերի և կենդանիների պահպանության, պաշտպանության, օգտագործման, վերարտադրության ու կառավարման, ինչպես նաև կենսաբազմազանության վրա մարդկանց գործունեության ազդեցությունը կարգավորելու քաղաքականությունը: Այս օրենքների հիմնանպատակը բուսական/կենդանական աշխարհի և կենսաբազմազանության պահպանության



ապահովումն է: Այն նաև սահմանում է տեսակների՝ մասնավորապես Էնդեմիկ և վտանգված, մոնիտորինգի և գնահատման ընթացակարգերը:

"ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին" թիվ 71-Ն և **"ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին"** թիվ 72-Ն ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի որոշումները սահմանում են ՀՀ բուսական և կենդանական աշխարհների հազվագյուտ, անհետացած ու անհետացող, կրճատվող, ոնորոշ տեսակների կենսաբանությունը, թվաքանակը, տարածման վայրերը և ձևաբանությունը:

"Հողի բերրի շերտի օգտագործման կարգը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 1622-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու և 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին" թիվ 1396-Ն որոշումը սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքում հողի բերրի շերտի (այսուհետ՝ բերրի շերտ) նպատակային և արդյունավետ օգտագործման հետ կապված հարաբերությունները՝ հանումը, տեղափոխումը, պահպանումը և հաշվառումը:

"Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թ.-ի հուլիսի 20-ի թիվ 1026-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին" թիվ 1404-Ն ՀՀ կառավարության որոշումը սահմանում է հողի բերրի շերտի հանման նորմերը և հանված բերրի շերտի պահպանմանն ու արդյունավետ օգտագործմանը ներկայացվող պահանջները՝ հողային աշխատանքներ կատարելիս հողերի պահպանությունն ապահովելու, ցածր արդյունավետություն ունեցող հանդակների բերրիությունը բարձրացնելու և ռեկուլտիվացվող հողերի բերրիությունը վերականգնելու համար:

"Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին" թիվ 65-Ն որոշման մեջ ներկայացված է ՀՀ Արարատի մարզի պատմամշակութային հուշարձանների ցանկը:

"Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին" թիվ 967-Ն ՀՀ կառավարության որոշում:

5. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Աշխատանքային նախագծով նախատեսվում է ՀՀ Արարատի մարզի Մխչյան համայնքում սեփականության իրավունքով Սարգիս Ներսիսյանին պատկանող 5.6 հա հասարակական կառուցապատման նշանակության հողամասի վրա կառուցել գյուղմթերքների շուկա, առևտրի և սպասարկման կենտրոն (այսուհետ՝ Գյուղմթերքների շուկա): Աշխատանքային նախագծի համար հիմք են հանդիսացել հողասեփականատիրոջ՝ Սարգիս Ներսիսյանի անշարժ գույքի օգտագործման իրավունքի վերաբերյալ թիվ 03-059-0238-0004 կադաստրային ծածկագրով վկայականը (Հավելված 1) և Մխչյանի համայնքապետարանի կողմից տրված 08.10.2019թ. թիվ 22 նախագծման թույլտվությունը (ճարտարապետահատակագծային առաջադրանքը)՝ Հավելված 2:

"ՀՀ Արարատի մարզի Հ. Մխչյան-Յովտաշեն ճանապարհի 1 հողամասում, գյուղմթերքների շուկա, առևտրի և սպասարկման կենտրոնի կառուցման" աշխատանքային նախագծային փաստաթղթերի

համապատասխանությունը ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին հավաստիացվել է "Արամ-Երեմ" ՍՊԸ-ի կողմից (ՀՀ քաղաքաշինության Կոմիտեի լիցենզիա № 16992)՝ **Հավելված 3**:

Գյուղմթերքների շուկայի, առևտրի և սպասարկման կենտրոնի կառուցապատման համար աշխատանքային նախագծով նախատեսվում է կառուցել՝

- Ադմինիստրատիվ շենք - 1 հատ՝ 123.34 մ²,
- Առևտրի սրահ - 2 հատ՝ 254.38 մ² գումարային մակերեսով,
- Ծածկած շուկա - 1 հատ՝ 1173.07 մ²,
- Հյուրատուն - 1 հատ՝ 181.32 մ²,
- Պահեստ - 3 հատ՝ 2655 մ² գումարային մակերեսով,
- Ծածկ - 15 հատ՝ 12160.5 մ² գումարային մակերեսով,
- Շվաքարան - 1 հատ՝ 847 մ²,
- Չուգարան - 3 հատ՝ 226.8 մ² գումարային մակերեսով,
- Սեպտիկ հորեր - 8 հատ՝ 390 մ³ գումարային ծավալով:

Գյուղմթերքների շուկայի տեղակայման արբանյակային քարտեզը ներկայացված է **Նկար 1**-ում: Նախատեսվող գործունեության տարածքի հատակագիծը՝ որտեղ ներկայացված են նաև կառուցվելիք շինությունները, բերված է **Հավելված 4**-ում, իսկ իրադրային հատակագիծը բերված է **Հավելված 5**-ում:



Նկար 1. Նախատեսվող գործունեության տեղակայման արբանյակային քարտեզը



5.1 Նախատեսվող գործունեության հողատարածքը

Աշխատանքային նախագծի համաձայն, Արարատի մարզի Մխչյան համայնքում՝ սեփականության իրավունքով Սարգիս Ներսիսյանին պատկանող 5.6 հա հասարակական կառուցապատման նշանակության հողամասի վրա (կադաստրային ծածկագիր՝ 03-059-0238-0004, **Հավելված 1**), նախատեսվում է կառուցել գյուղմթերքների, առևտրի և սպասարկման կենտրոն: Համաձայն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականի՝

- Հողամասի նշանակությունը՝ բնակավայրային է,
- Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ հասարակական կառուցապատման,
- Գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

Ըստ ճարտարապետահատակագծային առաջադրանքի (**Հավելված 2**)՝ հասարակական նշանակության 5.6 հա հողամասը չկառուցապատված տարածք է: Նախատեսվող գործունեության տարածքի հարևանությամբ գտնվող հողակտորները գյուղնշանակության են:

Գյուղմթերքների շուկայի շինարարության նախապատրաստական աշխատանքների ժամանակ իրականացվելու են հողային/փորման, ինչպես նաև տարածքի հարթեցման աշխատանքներ: Հողային աշխատանքների ընթացքում ավելորդ գրունտային զանգված չի առաջանալու, քանի որ այդ զանգվածը օգտագործվելու է հետլցան և տարածքի հարթեցման համար: Հողային աշխատանքների արդյունքում առաջացած գրունտային զանգվածի մի մասը բուսահող է, որը ամբողջությամբ օգտագործվելու է կառույցների հարակից տարածքների բարեկարգման համար:

Ստորև բերված են գյուղմթերքների շուկայի շինությունների կառուցման համար իրականացվող հողային/փորման աշխատանքների ծավալները:

• Ադմինիստրատիվ շենք

Ադմինիստրատիվ շենքի կառուցման համար իրականացվելու է 124 մ³ ծավալով հողային՝ փորման աշխատանքներ, որից հողի բերրի շերտի ծավալը 6 մ³ է: Հողի բերրի շերտը ամբողջությամբ օգտագործվելու է ադմինիստրատիվ շենքի հարակից տարածքների բարեկարգման համար: Փորված հողային զանգվածից 18.34 մ³ ծավալով հողը օգտագործվելու է փորված տարածքի հետլցման, իսկ մնացած 99.66 մ³ հողը՝ տարածքների հարթեցման համար:

• Առևտրի սրահ 1

Առևտրի սրահ 1-ի կառուցման համար իրականացվելու է 142.8 մ³ ծավալով հողային՝ փորման աշխատանքներ, որից հողի բերրի շերտի ծավալը 7 մ³ է: Հողի բերրի շերտը ամբողջությամբ օգտագործվելու է առևտրի սրահ 1-ի հարակից տարածքների բարեկարգման համար: Փորված հողային զանգվածից 38.9 մ³ ծավալով հողը օգտագործվելու է փորված տարածքի հետլցման, իսկ մնացած 96.9 մ³ հողը՝ տարածքների հարթեցման համար:

• Առևտրի սրահ 2

Առևտրի սրահ 2-ի կառուցման համար իրականացվելու է 117 մ³ ծավալով հողային՝ փորման աշխատանքներ, որից հողի բերրի շերտի ծավալը 6 մ³ է: Հողի բերրի շերտը ամբողջությամբ օգտագործվելու է առևտրի սրահ 2-ի հարակից տարածքների բարեկարգման համար: Փորված հողային զանգվածից 21 մ³ ծավալով հողը օգտագործվելու է փորված տարածքի հետլցման, իսկ մնացած 90 մ³ հողը տարածքների հարթեցման համար:



- **Ճածկած շուկա` 1 հատ**

Ճածկած շուկայի կառուցման համար իրականացվելու է 620 մ³ ծավալով հողային` փորման աշխատանքներ, որից հողի բերրի շերտի ծավալը 50 մ³ է: Հողի բերրի շերտը ամբողջությամբ օգտագործվելու է ճածկած շուկայի հարակից տարածքների բարեկարգման համար: Փորված հողային զանգվածից 229.8 մ³ ծավալով հողը օգտագործվելու է փորված տարածքի հետլցման, իսկ մնացած 340.2 մ³ հողը տարածքների հարթեցման համար:

- **Հյուրատան` 1 հատ**

Հյուրատան կառուցման համար իրականացվելու է 220 մ³ ծավալով հողային` փորման աշխատանքներ, որից հողի բերրի շերտի ծավալը 10 մ³ է: Հողի բերրի շերտը ամբողջությամբ օգտագործվելու է հյուրատան հարակից տարածքների բարեկարգման համար: Փորված հողային զանգվածից 60 մ³ ծավալով հողը օգտագործվելու է փորված տարածքի հետլցման, իսկ մնացած 150 մ³ հողը տարածքների հարթեցման համար:

- **Պահեստ` 3 հատ**

Պահեստների կառուցման համար իրականացվելու է 480 մ³ ծավալով հողային` փորման աշխատանքներ, որից հողի բերրի շերտի ծավալը 30 մ³ է: Հողի բերրի շերտը ամբողջությամբ օգտագործվելու է պահեստների հարակից տարածքների բարեկարգման համար: Փորված հողային զանգվածից 144 մ³ ծավալով հողը օգտագործվելու է փորված տարածքների հետլցման համար, իսկ մնացած 306 մ³ հողը տարածքների հարթեցման համար:

- **Ճածկ` 15 հատ**

Ճածկերի կառուցման համար իրականացվելու է 671 մ³ ծավալով հողային` փորման աշխատանքներ, որից հողի բերրի շերտի ծավալը 67 մ³ է: Հողի բերրի շերտը ամբողջությամբ օգտագործվելու է ճածկերի հարակից տարածքների բարեկարգման համար: Փորված հողային զանգվածից 138 մ³ ծավալով հողը օգտագործվելու է փորված տարածքի հետլցման, իսկ մնացած 466 մ³ հողը տարածքների հարթեցման և կանաչապատման աշխատանքներ իրականացման համար:

- **Շվաքարան` 1 հատ**

Շվաքարանի կառուցման համար իրականացվելու է 22 մ³ ծավալով հողային` փորման աշխատանքներ, որից հողի բերրի շերտի ծավալը 3 մ³ է: Հողի բերրի շերտը ամբողջությամբ օգտագործվելու է շվաքարանի հարակից տարածքների բարեկարգման համար: Փորված հողային զանգվածից 7 մ³ ծավալով հողը օգտագործվելու է փորված տարածքի հետլցման, իսկ մնացած 12 մ³ հողը տարածքների հարթեցման համար:

- **Չուգարան` 3 հատ**

Չուգարանների կառուցման համար իրականացվելու է 504 մ³ ծավալով հողային` փորման աշխատանքներ, որից հողի բերրի շերտի ծավալը 22 մ³ է: Հողի բերրի շերտը ամբողջությամբ օգտագործվելու է շվաքարանի հարակից տարածքների բարեկարգման համար: Փորված հողային զանգվածից 398.6 մ³ ծավալով հողը օգտագործվելու է փորված տարածքի հետլցման, իսկ մնացած 83.4 մ³ հողը տարածքների հարթեցման համար:

- **Սեպտիկ հորեր` 8 հատ**

Սեպտիկ հորերի կառուցման համար իրականացվելու է 567 մ³ ծավալով հողային` փորման աշխատանքներ: Փորված հողային զանգվածից 178 մ³ ծավալով հողը օգտագործվելու է փորված տարածքների հետլցման համար, իսկ մնացած 389 մ³ հողը տարածքների հարթեցման համար:



Ընդհանուր առմամբ գյուղմթերքների շուկայի կառուցման համար նախատեսվում է իրականացնել 3467.8 մ³ հողային/փորման աշխատանքներ, որից բերրի հողը կազմում է 201 մ³: Մնացած հողային ծավալից 1233.64 մ³-ը օգտագործվելու է նախատեսվող գործունեության տարածքում կառուցվող շինությունների հիմքերի իրականացումից հետո՝ ազատ տարածքների հետլցման համար, իսկ 2033.16 մ³-ը օգտագործվելու է շինությունների հարակից տարածքների հարթեցման համար:

5.2 Գյուղմթերքների շուկայի, առևտրի և սպասարկման կենտրոնի տեխնիկական բնութագրերը

Ինչպես նշվել է, գյուղմթերքների շուկան ունենալու է՝ ադմինիստրատիվ շենք, առևտրի սրահներ, ծածկած շուկա, հյուրատուն, պահեստներ, ծածկեր, շվաքարան, զուգարաններ, սեպտիկ հորեր և այլն: Նշված կառույցների նկարագրերը և տեխնիկական բնութագրերը ներկայացված են ստորև:

5.2.1 Ադմինիստրատիվ շենք (կառուցման համար պահանջվող մակերեսը՝ 153.76 մ², որից օգտագործվող մակերեսը՝ 123.34 մ²)

Ադմինիստրատիվ շենքը ունի երկու հարկ: Յուրաքանչյուր հարկը բաղկացած է առանձին սենյակներից: Ծինությունը ապահովված է միջանցիկ և անկյունային օդափոխությամբ: Գլխավոր մուտքը կազմակերպված է փողոցի կողմից: Ծինության բոլոր փայտե տարրերը մշակված են հակահրդեհային և հականեխիչ նյութերով:

Ծինության արտաքին պատերի շարվածքը իրականացվելու է 400 մմ հաստությամբ տուֆաքարերից: Միջնապատերի շարվածքը իրականացվելու է տարբեր հաստությամբ պեմզաբլոկներով և տուֆաքարերով: Տանիքը նախատեսված է իրականացնել երկթեք՝ մետաղական ցինկապատ թիթեյա ծածկույթով և ջրհորդաններով համալրված կազմակերպված ջրահեռացման համակարգով:

Ադմինիստրատիվ շենքի հիմքի իրականացման համար որպես հիմնատակ օգտագործվելու է նախատեսվող գործունեության տարածքում առկա գրունտը: Մինչև բետոնի նախապատրաստական շերտի փռումը գրունտի վերին շերտը խտացվելու է 20-40 մմ չափամասի խճով: Նախապատրաստական շերտի բետոնը ընտրված է B7.5 դասի, իսկ հիմքերի կոնստրուկցիաների բետոնը՝ B20 դասի: Նախատեսվող գործունեության տարածքում գրունտային ջրերը գտնվում են բավարար խորության վրա:

Ադմինիստրատիվ շենքի 124.41 մ² մակերեսով տարածքը ունենալու է լամինատե հատակ, 81.03 մ² մակերեսով տարածքը՝ խեցեսալե հատակ, իսկ 81.03 մ² մակերեսով տարածքը լինելու է մանրահատակ: Հատակների հիմքերը բաղկացած են լինելու տոփանված խճից և ծածկի սալից, բետոնե նախապատրաստական շերտից և ցեմենտ ավազե հարթեցնող շերտից, իսկ մանրահատակի դեպքում նաև կաչուն մածուկից:

Ադմինիստրատիվ շենքի կառուցման համար իրականացվող հողային աշխատանքների ծավալը, կիրառվող շինարարական կոնստրուկցիաների և նյութերի անվանացանկը, ինչպես նաև դրանք քանակությունները բերված են ստորև **Աղյուսակ 1**-ում:

Աղյուսակ 1. Աղմինիստրատիվ շենքի համար իրականացվող աշխատանքների ծավալները, օգտագործվող նյութերի անվանացանկը և քանակները

№	Անվանումը	Քանակը	Նավալը	Ընդհանուր զանգվածը
I. Հողաձևի ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ				
I.1	Երկաթբետոնե հիմքի համար հողային զանգվածի փորում շինարարական տեխնիկայով, որից՝		124 մ ³	244.4 տ
I.1.1	հողի բերրի շերտը (ρ=1.4)		6 մ ³	8.4 տ
I.1.2	գրունտը (ρ=2.0)		118 մ ³	236 տ
II. ՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՐԿԱԹԲԵՏՈՆԵ ՀԻՄՔԵՐԻ ԵՎ ՊԱՏԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ				
II.1	Երկաթբետոնե հիմքերի համար օգտագործվող B20 և B7.5 դասի բետոնե խառնուրդ (կվարցային ավազով և բազալտե խճով)		99.66 մ ³	229.218 տ
II.1.1	Φ22 A500c և Φ8 A240c տիպի ամրանային ցանց			2.4 տ
II.2	Առաջին և երկրորդ հարկերի առաստաղների և պատերի հիմքերի համար օգտագործվող B25 դասի բետոնե խառնուրդ		178 մ ³	416.8 տ
II.3	Արտաքին պատերի իրականացման համար օգտագործվող տուֆ քար	6872 հատ	156.128 մ ³	200 տ
III. ՇԻՆՈՒԹՅԱՆ ԾՊԵՂԱՅԱՐԿԻ ԵՎ ՏԱՆԻՔԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ				
III.1	Տանիքի փայտե տարրերը՝			
III.1.1	Ծպեղ	42 հատ		2.1 տ
III.1.2	Կավարամածի տախտակներ	60 հատ	1.3 մ ³	0.6 տ
III.2	Շինության տանիքի համար օգտագործվող ծածկ			1 տ
VI. ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ				
VI.1	Գրունտի ետլիցք և տոփանում շինության հիմքի իրականացումից հետո		18.34 մ ³	36.68 տ
VI.2	Մնացած գրունտի օգտագործում տարածքի հարթեցման համար		99.66 մ ³	199.32 տ
VI.3	Հողի բերրի շերտի օգտագործում տարածքի բարեկարգման համար		6 մ ³	8.4 տ

5.2.2 Առևտրի սրահ 1 (կառուցման համար պահանջվող մակերեսը՝ 188.16 մ², որից օգտագործվող մակերեսը՝ 140.37 մ²)

Առևտրի սրահ 1-ը մեկ հարկանի շինություն է, որը բաղկացած է առևտրի առանձին տաղավարներից: Շինությունը ապահովված է միջանցիկ և անկյունային օդափոխությամբ: Գլխավոր մուտքը կազմակերպված է փողոցի կողմից: Շինության բոլոր փայտե տարրերը մշակված են հակահրդեհային և հակաճեխիչ նյութերով:

Առևտրի սրահ 1-ի արտաքին պատերի շարվածքը իրականացվելու է 400 մմ հաստությամբ տուֆաքարերից: Միջնապատերի շարվածքը իրականացվելու է տարբեր հաստությամբ պեմզաբլոկներով և տուֆաքարերով: Տանիքը նախատեսված է իրականացնել երկթեք՝ մետաղական ցինկապատ թիթեղյա ծածկույթով և ջրհորդաններով համալրված կազմակերպված ջրահեռացման համակարգով:

Շինության հիմքի իրականացման համար որպես հիմնատակ օգտագործվելու է նախատեսվող գործունեության տարածքում առկա գրունտը: Մինչև բետոնի նախապատրաստական շերտի

փռումը գրունտի վերին շերտը խտացվելու է 20-40 մմ չափամասի խճով: Նախապատրաստական շերտի բետոնը ընտրված է B7.5 դասի, իսկ հիմքերի կոնստրուկցիաների բետոնը՝ B20 դասի:

Առևտրի սրահ 1-ում 140.37 մ² մակերեսով տարածքը ունենալու է խեցեսալե հատակ: Հատակների հիմքերը բաղկացած են լինելու տոփանված խճից, բետոնե նախապատրաստական շերտից և ցեմենտ-ավազե հարթեցնող շերտից:

Առևտրի սրահ 1-ի կառուցման համար իրականացվող հողային աշխատանքների ծավալը, կիրառվող շինարարական կոնստրուկցիաների և նյութերի անվանացանկը, ինչպես նաև դրանց քանակությունները բերված են ստորև **Աղյուսակ 2**-ում:

Աղյուսակ 2. Առևտրի սրահ 1-ի համար իրականացվող աշխատանքների ծավալները, օգտագործվող նյութերի անվանացանկը և քանակները

№	Անվանումը	Քանակը	Ճավալը	Ընդհանուր զանգվածը
I. ՀՈՂԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ				
I.1	Երկաթբետոնե հիմքի համար հողային զանգվածի փորում շինարարական տեխնիկայով, որից՝		142.8 մ ³	281.4 տ
I.1.1	հողի բերրի շերտը ($\rho=1.4$)		7 մ ³	9.8 տ
I.1.2	գրունտը ($\rho=2.0$)		135.8 մ ³	271.6 տ
II. ՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՐԿԱԹԲԵՏՈՆԵ ՀԻՄՔԵՐԻ ԵՎ ՊԱՏԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ				
II.1	Երկաթբետոնե հիմքերի համար օգտագործվող B20 և B7.5 դասի բետոնե խառնուրդ (կվարցային ավազով և բազալտե խճով)		96.9 մ ³	228 տ
II.1.1	Փ22 A500c և Փ8 A240c տիպի ամրանային ցանց			2.6 տ
II.2	Շինության բետոնե հատակի իրականացում		22.8 մ ³	53.4 տ
II.3	Արտաքին պատերի իրականացման համար օգտագործվող տուֆ քար	1265 հատ	30.5 մ ³	70 տ
III. ՇԻՆՈՒԹՅԱՆ ԾՊԵՂՆԱՅԱՐԿԻ ԵՎ ՏԱՆԻՔԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ				
III.1	Տանիքի փայտե տարրերը՝			
III.1.1	Ծպեղ	56 հատ		11 տ
III.1.2	Կավարամածի տախտակներ	60 հատ	1.3 մ ³	0.6 տ
III.2	Շինության տանիքի համար օգտագործվող ծածկ			1 տ
VI. ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ				
VI.1	Գրունտի ետլիցք և տոփանում շինության հիմքի իրականացումից հետո		38.9 մ ³	77.8 տ
VI.2	Մնացած գրունտի օգտագործում տարածքի հարթեցման համար		96.9 մ ³	193.8 տ
VI.3	Հողի բերրի շերտի օգտագործում տարածքի բարեկարգման համար		7 մ ³	9.8 տ

5.2.3 Առևտրի սրահ 2 (կառուցման համար պահանջվող մակերեսը՝ 128.8 մ², որից օգտագործվող մակերեսը՝ 114.01 մ²),

Առևտրի սրահ 2-ը մեկ հարկանի շինություն է, որը բաղկացած է առևտրի առանձին տաղավարներից: Շինությունը ապահովված է միջանցիկ և անկյունային օդափոխությամբ: Գլխավոր մուտքը կազմակերպված է փողոցի կողմից: Շինության բոլոր փայտե տարրերը մշակված են հակահրդեհային և հականեխիչ նյութերով:



Շինության արտաքին պատերի շարվածքը իրականացվելու է 400 մմ հաստությամբ տուֆաքարերից: Միջնապատերի շարվածքը իրականացվելու է տարբեր հաստությամբ պեմզաբլոկներով և տուֆաքարերով: Տանիքը նախատեսված է իրականացնել երկթեք՝ մետաղական ցինկապատ թիթեղյա ծածկույթով և ջրհորդաններով համալրված կազմակերպված ջրահեռացման համակարգով:

Շինության հիմքի իրականացման համար որպես հիմնատակ օգտագործվելու է նախատեսվող գործունեության տարածքում առկա գրունտը: Մինչև բետոնի նախապատրաստական շերտի փռումը գրունտի վերին շերտը խտացվելու է 20-40 մմ չափամասի խճով: Նախապատրաստական շերտի բետոնը ընտրված է B7.5 դասի, իսկ հիմքերի կոնստրուկցիաների բետոնը՝ B20 դասի:

Առևտրի սրահ 2-ում ամբողջ 114.01 մ² մակերեսով տարածքը ունենալու է խեցեսալե հատակ: Հատակների հիմքերը բաղկացած են լինելու տոփանված խճից, բետոնե նախապատրաստական շերտից և ցեմենտ-ավազե հարթեցնող շերտից:

Առևտրի սրահ 2-ի կառուցման համար իրականացվող հողային աշխատանքների ծավալը, կիրառվող շինարարական կոնստրուկցիաների և նյութերի անվանացանկը և դրանց բանակությունները բերված են ստորև **Աղյուսակ 3-ում**:

Աղյուսակ 3. Առևտրի սրահ 2-ի համար իրականացվող աշխատանքների ծավալները, օգտագործվող նյութերի անվանացանկը և բանակները

№	Անվանումը	Քանակը	Նավալը	Ընդհանուր զանգվածը
I. ՀՈՂԱՅԻՆ ԱՃԻԱՏԱՆՔՆԵՐ				
I.1	Երկաթբետոնե հիմքի համար հողային զանգվածի փորում շինարարական տեխնիկայով, որից՝		117 մ ³	230.4 տ
I.1.1	հողի բերրի շերտը (ρ=1.4)		6 մ ³	8.4 տ
I.1.2	գրունտը (ρ=2.0)		111 մ ³	222 տ
II. ՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՐԿԱԹԲԵՏՈՆԵ ՀԻՄՔԵՐԻ ԵՎ ՊԱՏԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ				
II.1	Երկաթբետոնե հիմքերի համար օգտագործվող B20 և B7.5 դասի բետոնե խառնուրդ (կվարցային ավազով և բազալտե խճով)		90 մ ³	214 տ
II.1.1	Φ22 A500c և Φ8 A240c տիպի ամրանային ցանց			2.32 տ
II.2	Շինության բետոնե հատակի իրականացում		37.8 մ ³	88.8 տ
II.3	Արտաքին պատերի իրականացման համար օգտագործվող տուֆ քար	1204 հատ	28.8 մ ³	66.24 տ
III. ՇԻՆՈՒԹՅԱՆ ԾՊԵՂՆԱՅԱՐԿԻ ԵՎ ՏԱՆԻՔԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ				
III.1	Տանիքի փայտե տարրերը՝			
III.1.1	ճայել	56 հատ		11 տ
III.1.2	Կավարամածի տախտակներ	60 հատ	1.3 մ ³	0.6 տ
III.2	Շինության տանիքի համար օգտագործվող ծածկ			1 տ
VI. ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԱՃԻԱՏԱՆՔՆԵՐ				
VI.1	Գրունտի ետլիցք և տոփանում շինության հիմքի իրականացումից հետո		21 մ ³	42 տ
VI.2	Մնացած գրունտի օգտագործում տարածքի հարթեցման համար		90 մ ³	180 տ
VI.3	Հողի բերրի շերտի օգտագործում տարածքի բարեկարգման համար		6 մ ³	8.4 տ



5.2.4 Ծածկ (օգտագործման և կառուցման համար պահանջվող մակերեսը՝ 12160.5 մ²)

Ծածկով տարածքները մեկ հարկանի, առանց արտաքին և ներքին պատերի, տանիք ունեցող բաց առևտրային տարածքներ են: Նախատեսվող գործունեության գլխավոր հատակագծի համաձայն (տես **Հավելված 4-ը**) ծածկով տարածքները թվով 15 են:

Ծածկով տարածքների համար կրող կոնստրուկցիա է հանդիսանում մետաղե տարածական կարկասը: Սյուները նախատեսված են 108x3 մ հատվածքի կլոր խողովակներից: Տանիքը երկթեք է, ունի մետաղական պրոֆիլավոր թիթեղյա ծածկույթ և կազմակերպված ջրահեռացման համակարգ: Յուրաքանչյուր ծածկով տարածք ունի մի քանի ջրհորդան: Կառուցման համար օգտագործվող բոլոր մետաղական տարրերը ներկվելու են հակակոռոզիոն ներկով:

Մինչև բետոնի նախապատրաստական շերտի փռումը, գրունտի վերին շերտը խտացվելու է 20-40 մմ չափամասի խճով: Նախապատրաստական շերտի բետոնը ընտրված է B7.5 դասի, իսկ հիմքերի կոնստրուկցիաների բետոնը՝ B20 դասի:

Ծածկով տարածքների կառուցման համար իրականացվող հողային աշխատանքների ծավալը, կիրառվող շինարարական կոնստրուկցիաների և նյութերի անվանացանկը և դրանց քանակությունները բերված են ստորև **Աղյուսակ 4-ում**:

Աղյուսակ 4. Ծածկով տարածքների համար իրականացվող աշխատանքների ծավալները, օգտագործվող նյութերի անվանացանկը և քանակները

№	Անվանումը	Քանակը	Ճավալը	Ընդհանուր գանգվածը
I. ՀՈՂԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ				
I.1	Կետային հիմքերի իրականացման համար հողային գանգվածի փորում շինարարական տեխնիկայով, որից՝		671 մ ³	1301.8 տ
I.1.1	հողի բերրի շերտը (ρ=1.4)		67 մ ³	93.8 տ
I.1.2	գրունտը (ρ=2.0)		604 մ ³	1208 տ
II. ՇԻՆՈՒԹՅԱՆ ՄԵՏԱՂԱԿԱՆ ՏԱՐԵՐԸ ԵՎ ԿԵՏԱՅԻՆ ՀԻՄՔԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ				
II.1	Կետային հիմքերի համար օգտագործվող B20 դասի բետոնե խառնուրդ		466 մ ³	1071.8 տ
II.2	Շինության բետոնե հատակի իրականացում		2432 մ ³	5774 տ
II.3	Մետաղական կոնստրուկցիաներ՝			
II.3.1	Ձգիչ, վերևի և ներքևի գոտիներ (խողովակ 80x40x3)			3807 տ
II.3.2	Կավարամած (խողովակ 60x40x3)			1800 տ
II.3.3	Ուղղաձիգ կապեր, կանգնակ և թեքան (խողովակ 40x40x3)			10080 տ
II.3.4	Սյուն (խողովակ 108x3)			900 տ
III. ՇԻՆՈՒԹՅԱՆ ԾՊԵՂՆԱՅՐԱԿԻ ԵՎ ՏԱՆԻՔԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ				
III.1	Տանիքի հիմնական տարրերը՝			
III.1.1	Ծպեղ	1145 հատ		225 տ
III.1.2	Կավարամած	7500 հատ	145 մ ³	75 տ
VI. ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ				
VI.1	Գրունտի ետլիցք և տոփանում շինության կետային հիմքերի իրականացումից հետո		138 մ ³	271 տ
VI.2	Մնացած գրունտի օգտագործում տարածքների		466 մ ³	932 տ



№	Անվանումը	Քանակը	Ճավալը	Ընդհանուր զանգվածը
	հարթեցման համար			
VI.3	Հողի բերրի շերտի օգտագործում տարածքների բարեկարգման և կանաչապատման համար		67 մ ³	93.8 տ

5.2.5 Ճածկած շուկա (կառուցման համար պահանջվող մակերեսը՝ 1229.76 մ², որից օգտագործվող մակերեսը՝ 1173.07 մ²)

Ճածկած շուկան մեկ հարկանի, փակ շինություն է, որը բաղկացած է առանձին տաղավարներից: Այն մեծ, փակ առևտրային հրապարակ է, որտեղ նախատեսված է իրականացնել հիմնականում քամուց, փոշուց զերծ պահվող մթերքների վաճառք: Գլխավոր մուտքը կազմակերպված է փողոցի կողմից: Շինության բոլոր փայտե տարրերը մշակված են հակահրդեհային և հականեխիչ նյութերով:

Շինության արտաքին պատերի շարվածքը իրականացվելու է 400 մմ հաստությամբ տուֆաքարերից: Նախատեսվող գործունեության տարածքում գրունտային ջրերը բացակայում են: Տանիքը նախատեսված է իրականացնել երկթեք՝ մետաղական ցինկապատ թիթեյա ծածկույթով և ջրհորդաններով համալրված կազմակերպված ջրահեռացման համակարգով:

Շինության հիմքի իրականացման համար որպես հիմնատակ օգտագործվելու է նախատեսվող գործունեության տարածքում առկա գրունտը: Մինչև բետոնի նախապատրաստական շերտի փռումը գրունտի վերին շերտը խտացվելու է 20-40 մմ չափամասի խճով: Նախապատրաստական շերտի բետոնը ընտրված է B7.5 դասի, իսկ հիմքերի կոնստրուկցիաների բետոնը՝ B20 դասի:

Ճածկած շուկայի 1173.07 մ² մակերեսով տարածքը ունենալու է խեցեսալե հատակ: Հատակների հիմքերը բաղկացած են լինելու տոփանված խճից, բետոնե նախապատրաստական շերտից և ցեմենտ-ավազե հարթեցնող շերտից:

Ճածկած շուկայի կառուցման համար իրականացվող հողային աշխատանքների ծավալը, կիրառվող շինարարական կոնստրուկցիաների և նյութերի անվանացանկը, ինչպես նաև դրանց քանակությունները բերված են ստորև Աղյուսակ 5-ում:

Աղյուսակ 5. Ճածկած շուկայի համար իրականացվող աշխատանքների ծավալները, օգտագործվող նյութերի անվանացանկը և քանակները

№	Անվանումը	Քանակը	Ճավալը	Ընդհանուր զանգվածը
I. ՀՈՂԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ				
I.1	Երկաթբետոնե հիմքի համար հողային զանգվածի փորում շինարարական տեխնիկայով, որից՝		620 մ ³	1210 տ
I.1.1	հողի բերրի շերտը (ρ=1.4)		50 մ ³	70 տ
I.1.2	գրունտը (ρ=2.0)		570 մ ³	1140 տ
II. ՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՐԿԱԹԲԵՏՈՆԵ ՀԻՄՔԵՐԻ և ՊԱՏԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ				
II.1	Երկաթբետոնե հիմքերի համար օգտագործվող B20 և B7.5 դասի բետոնե խառնուրդ (կվարցային ավազով և բազալտե խճով)		340.2 մ ³	801 տ
II.1.1	Փ22 A500c և Փ8 A240c տիպի ամրանային ցանց			8.6 տ
II.2	Շինության բետոնե հատակի իրականացում		204 մ ³	480 տ



№	Անվանումը	Քանակը	ճավալը	Ընդհանուր զանգվածը
II.3	Արտաքին պատերի իրականացման համար օգտագործվող տուֆ քար	15000 հատ	239.96 մ ³	552 տ
III. ՇԻՆՈՒԹՅԱՆ ԾՊԵՂՆԱՅԱՐԿԻ և ՏԱՆԻՔԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ				
III.1	Տանիքի փայտե տարրերը՝			
III.1.1	Ծպեղ	170 հատ		22 տ
III.1.2	Կավարամածի տախտակներ	600 հատ	13.2 մ ³	6.2 տ
III.2	Շինության տանիքի համար օգտագործվող ծածկ			10.3 տ
VI. ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ				
VI.1	Գրունտի ետլիցք և տոփանում շինության հիմքի իրականացումից հետո		229.8 մ ³	459.6 տ
VI.2	Մնացած գրունտի օգտագործում տարածքի հարթեցման համար		340.2 մ ³	680.4 տ
VI.3	Հողի բերրի շերտի օգտագործում տարածքի բարեկարգման համար		50 մ ³	70 տ

5.2.6 Հյուրատուն (կառուցման համար պահանջվող մակերեսը՝ 218.24 մ², որից օգտագործվող մակերեսը՝ 181.32 մ²)

Հյուրատունը ունի երկու հարկ: Շինությունը ապահովված է միջանցիկ և անկյունային օդափոխությամբ: Գլխավոր մուտքը կազմակերպված է փողոցի կողմից: Շինության բոլոր փայտե տարրերը մշակված են հակահրդեհային և հականեխիչ նյութերով:

Հյուրատան արտաքին պատերի շարվածքը իրականացվելու է 400 մմ հաստությամբ տուֆաքարերից: Միջնապատերի շարվածքը իրականացվելու է տարբեր հաստությամբ պեմզաբլոկներով և տուֆաքարերով: Տանիքը նախատեսված է իրականացնել երկթեք՝ մետաղական ցինկապատ թիթեղյա ծածկույթով և ջրհորդաններով համալրված կազմակերպված ջրահեռացման համակարգով:

Շինության հիմքի իրականացման համար որպես հիմնատակ օգտագործվելու է նախատեսվող գործունեության տարածքում առկա գրունտը, որը ոչ աղակալված, չուռչող և ոչ նստվածքային գրունտ է: Մինչև բետոնի նախապատրաստական շերտի փռումը գրունտի վերին շերտը խտացվելու է 20-40 մմ չափամասի խճով: Նախապատրաստական շերտի բետոնը ընտրված է B7.5 դասի, իսկ հիմքերի կոնստրուկցիաների բետոնը՝ B20 դասի: Նախատեսվող գործունեության տարածքում գրունտային ջրերը բացակայում են: Հյուրատան 214.96 մ² մակերեսով տարածքը ունենալու է լամինատե հատակ, իսկ 145.48 մ² մակերեսով տարածքը՝ խեցեսալե հատակ: Հատակների հիմքերը բաղկացած են լինելու տոփանված խճից և ծածկի սալից, բետոնե նախապատրաստական շերտից և ցեմենտ ավազե հարթեցնող շերտից:

Հյուրատան կառուցման համար իրականացվող հողային աշխատանքների ծավալը, կիրառվող շինարարական կոնստրուկցիաների և նյութերի անվանացանկը, ինչպես նաև դրանց քանակնակությունները բերված են ստորև [Աղյուսակ 6](#)-ում:

Աղյուսակ 6. Հյուրատան համար իրականացվող աշխատանքների ծավալները, օգտագործվող նյութերի անվանացանկը և քանակները

№	Անվանումը	Քանակը	Նավալը	Ընդհանուր զանգվածը
I. Հողաձևի ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ				
I.1	Երկաթբետոնե հիմքի համար հողային զանգվածի փորում շինարարական տեխնիկայով, որից՝		220 մ ³	434 տ
I.1.1	հողի բերրի շերտը (ρ=1.4)		10 մ ³	14 տ
I.1.2	գրունտը (ρ=2.0)		210 մ ³	420 տ
II. ԾԻՆՈՒԹՅԱՆ ԵՐԿԱԹԲԵՏՈՆԵ ՀԻՄՔԵՐԻ ԵՎ ՊԱՏԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ				
II.1	Երկաթբետոնե հիմքերի համար օգտագործվող B20 և B7.5 դասի բետոնե խառնուրդ (կվարցային ավազով և բազալտե խճուղ)		150 մ ³	320 տ
II.1.1	Φ22 A500c և Φ8 A240c տիպի ամրանային ցանց			3 տ
II.2	Առաջին և երկրորդ հարկերի առաստաղների և պատերի հիմքերի համար օգտագործվող B25 դասի բետոնե խառնուրդ		88.6 մ ³	206 տ
II.2.1	Φ22 A500c և Φ8 A240c տիպի ամրանային ցանց			6 տ
II.3	Արտաքին պատերի իրականացման համար օգտագործվող տուֆ քար	6229 հատ	99.669 մ ³	230 տ
III. ԾԻՆՈՒԹՅԱՆ ԾՊԵՂԱՅԱՐԿԻ ԵՎ ՏԱՆԻՔԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ				
III.1	Տանիքի փայտե տարրերը՝			
III.1.1	Ծպեղ	42 հատ		2.1 տ
III.1.2	Կավարամածի տախտակներ	60 հատ	1.3 մ ³	0.6 տ
III.2	Ծիսության տանիքի համար օգտագործվող ծածկ			1 տ
VI. ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ				
VI.1	Գրունտի ետլիցք և տոփանում շինության հիմքի իրականացումից հետո		60 մ ³	120 տ
VI.2	Մնացած գրունտի օգտագործում տարածքի հարթեցման համար		150 մ ³	300 տ
VI.3	Հողի բերրի շերտի օգտագործում տարածքի բարեկարգման համար		10 մ ³	14 տ

5.2.7 Պահեստ (կառուցման համար պահանջվող մակերեսը՝ 2796.75 մ², որից օգտագործվող մակերեսը՝ 2655 մ²)

Գյուղմթերքների շուկայում մթերքների պահման համար նախատեսված է կառուցել 3 պահեստ: Դրանք փակ, մեկ հարկանի կառույցներ են, որոնք ունեն գյուղմթերքների պահման համար համապատասխան բոլոր պայմանները: Պահեստների մուտքերը կազմակերպված են դիմային և հետնային ճակատների կողմից: Ծիսության բոլոր փայտե տարրերը մշակված են հակահրդեհային և հականեխիչ նյութերով:

Ծիսությունների արտաքին պատերի շարվածքը իրականացվելու է 400 մմ հաստությամբ տուֆաքարերից: Տանիքը նախատեսված է իրականացնել երկթե՝ մետաղական ցինկապատ թիթեղյա ծածկույթով և ջրհորդաններով համալրված կազմակերպված ջրահեռացման համակարգով:



Շինությունների հիմքերի իրականացման համար որպես հիմնատակ օգտագործվելու է նախատեսվող գործունեության տարածքում առկա գրունտը: Մինչև բետոնի նախապատրաստական շերտի փռումը գրունտի վերին շերտը խտացվելու է 20-40 մմ չափամասի խճով: Նախապատրաստական շերտի բետոնը ընտրված է B7.5 դասի, իսկ հիմքերի կոնստրուկցիաների բետոնը՝ B20 դասի:

Բոլոր պահեստներում նախատեսվում է իրականացնել խեցեսալե հատակներ: Հատակների հիմքերը բաղկացած են լինելու տոփանված խճից, բետոնե նախապատրաստական շերտից և ցեմենտ-ավազե հարթեցնող շերտից:

Պահեստների կառուցման համար իրականացվող հողային աշխատանքների ծավալը, կիրառվող շինարարական կոնստրուկցիաների և նյութերի անվանացանկը, ինչպես նաև դրանց քանակությունները բերված են ստորև **Աղյուսակ 7**-ում:

Աղյուսակ 7. Պահեստների կառուցման համար իրականացվող աշխատանքների ծավալները, օգտագործվող նյութերի անվանացանկը և քանակները

№	Անվանումը	Քանակը	Ճավալը	Ընդհանուր զանգվածը
I. Հողաձևի ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ				
I.1	Երկաթբետոնե հիմքի համար հողային զանգվածի փորում շինարարական տեխնիկայով, որից՝		480 մ ³	942 տ
I.1.1	հողի բերրի շերտը ($\rho=1.4$)		30 մ ³	42 տ
I.1.2	գրունտը ($\rho=2.0$)		450 մ ³	900 տ
II. ՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՐԿԱԹԲԵՏՈՆԵ ՀԻՄՔԵՐԻ ԵՎ ՊԱՏԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ				
II.1	Երկաթբետոնե հիմքերի համար օգտագործվող B20 և B7.5 դասի բետոնե խառնուրդ (կվարցային ավազով և բազալտե խճով)		306 մ ³	720 տ
II.1.1	Փ22 A500c և Փ8 A240c տիպի ամրանային ցանց			8.28 տ
II.2	Շինության բետոնե հատակի իրականացում		580 մ ³	1374 տ
II.3	Արտաքին պատերի իրականացման համար օգտագործվող տուֆ քար	18000 հատ	288 մ ³	662.4 տ
III. ՇԻՆՈՒԹՅԱՆ ԾՊԵՂԱՅԱՐԿԻ ԵՎ ՏԱՆԻՔԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ				
III.1	Տանիքի փայտե տարրերը՝			
III.1.1	Ծպեղ	520 հատ		36 տ
III.1.2	Կավարամածի տախտակներ	1028 հատ	24 մ ³	10.6 տ
III.2	Շինության տանիքի համար օգտագործվող ծածկ			17.2 տ
VI. ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ				
VI.1	Գրունտի ետլիցք և տոփանում շինության հիմքի իրականացումից հետո		144 մ ³	288 տ
VI.2	Մնացած գրունտի օգտագործում տարածքի հարթեցման համար		306 մ ³	612 տ
VI.3	Հողի բերրի շերտի օգտագործում տարածքի բարեկարգման համար		30 մ ³	42 տ

5.2.8 Շվաքարան (Օգտագործման և կառուցման համար պահանջվող մակերեսը՝ 847մ²)

Նախատեսվող գործունեության տարածքում նախատեսվում է կառուցել շվաքարան, որը տանիք ունեցող, մեկ հարկանի, առանց արտաքին և ներքին պատերի՝ բաց տարածք է: Այն գտնվելու է հյուրատան հարևանությամբ:

Շվաքարանի համար որպես կրող կոնստրուկցիա հանդիսանում է մետաղե տարածական կարկասը: Սյուները նախատեսված են 108x3 մմ հատվածքի կլոր խողովակներից: Տանիքը իրականացվելու է երկթեք՝ մետաղական պրոֆիլավոր թիթեղյա ծածկույթով և ջրհորդաններով համալրված կազմակերպված ջրահեռացման համակարգով: Կառուցման համար օգտագործվող բոլոր մետաղական տարրերը ներկվելու են հակակոռոզիոն ներկով: Մինչև բետոնի նախապատրաստական շերտի փռումը գրունտի վերին շերտը խտացվելու է 20-40 մմ չափամասի խճով: Նախապատրաստական շերտի բետոնը ընտրված է B7.5 դասի:

Շվաքարանի կառուցման համար իրականացվող հողային աշխատանքների ծավալը, կիրառվող շինարարական կոնստրուկցիաների և նյութերի անվանացանկը, ինչպես նաև դրանց քանակությունները բերված են ստորև **Աղյուսակ 8**-ում:

Աղյուսակ 8. Շվաքարանի համար իրականացվող աշխատանքների ծավալները, օգտագործվող նյութերի անվանացանկը և քանակները

№	Անվանումը	Քանակը	Ճավալը	Ընդհանուր գանգվածը
I. ՀՈՂԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ				
I.1	Նախապատրաստական բետոնե շերտի իրականացման համար հողային զանգվածի փորում շինարարական տեխնիկայով, որից՝		22 մ ³	42.2 տ
I.1.1	հողի բերրի շերտը (ρ=1.4)		3 մ ³	4.2 տ
I.1.2	գրունտը (ρ=2.0)		19 մ ³	38 տ
II. ՇԻՆՈՒԹՅԱՆ ՄԵՏԱՂԱԿԱՆ ՏԱՐՐԵՐԸ ԵՎ ԲԵՏՈՆԵ ՇԵՐՏԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ				
II.1	Շինության բետոնե շերտի իրականացում		12 մ ³	67 տ
II.2	Մետաղական կոնստրուկցիաներ՝			
II.2.1	Ձգիչ, վերևի և ներքևի գոտիներ (խողովակ 80x40x3)			5 տ
II.2.2	Կավարամած (խողովակ 60x40x3)			4 տ
III. ՇԻՆՈՒԹՅԱՆ ԾԱՃԿԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ				
III.1	Կավարամած	56 հատ	1.5 մ ³	0.6 տ
VI. ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ				
VI.1	Գրունտի ետլիցք և տոփանում շինության կետային հիմքերի իրականացումից հետո		7 մ ³	14 տ
VI.2	Մնացած գրունտի օգտագործում տարածքների հարթեցման համար		12 մ ³	24 տ
VI.3	Հողի բերրի շերտի օգտագործում տարածքների բարեկարգման և կանաչապատման համար		3 մ ³	4.2 տ



5.2.9 Չուգարան (կառուցման համար պահանջվող մակերեսը՝ 263.6 մ², որից օգտագործվող մակերեսը՝ 226.8 մ²)

Գյուղմթերքների շուկայի, առևտրի և սպասարկման կենտրոնում նախատեսվում է կառուցել 3 Չուգարան: Չուգարաններից յուրաքանչյուրը ունենալու է 8 հատ սանհանգույց, 2 հատ լվացարան, տոմսավաճառի սրահ և նախամուտք:

Շինությունների արտաքին պատերի շարվածքը իրականացվելու է 200 մմ հաստությամբ տուֆաքարերից, իսկ միջնապատերը՝ տարբեր հաստությամբ պեմզաբլոկներից և տուֆաքարերից: Տանիքը նախատեսված է իրականացնել միաթեք՝ մետաղական ցինկապատ թիթեղյա ծածկույթով և ջրհորդաններով համալրված կազմակերպված ջրահեռացման համակարգով: Մինչև բետոնի նախապատրաստական շերտի փռումը գրունտի վերին շերտը խտացվելու է 20-40 մմ չափամասի խճով: Նախապատրաստական շերտի բետոնը ընտրված է B7.5 դասի, իսկ հիմքերի կոնստրուկցիաների բետոնը՝ B20 դասի:

Չուգարաններում նախատեսվում է իրականացնել խեցեսալե հատակներ: Հատակների հիմքերը բաղկացած են լինելու ծածկի սալից, բետոնե նախապատրաստական շերտից և ցեմենտ ավազե հարթեցնող շերտից:

Չուգարանների կառուցման համար իրականացվող հողային աշխատանքների ծավալը, կիրառվող շինարարական կոնստրուկցիաների և նյութերի անվանացանկը, ինչպես նաև դրանց քանակությունները բերված են ստորև Աղյուսակ 9-ում:

Աղյուսակ 9. Չուգարանների կառուցման համար իրականացվող աշխատանքների ծավալները, օգտագործվող նյութերի անվանացանկը և քանակները

№	Անվանումը	Քանակը	Ճավալը	Ընդհանուր գանգվածը
I. ՀՈՂԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ				
I.1	Երկաթբետոնե հիմքի համար հողային գանգվածի փորում շինարարական տեխնիկայով, որից՝		504 մ ³	994.8 տ
I.1.1	հողի բերրի շերտը (ρ=1.4)		22 մ ³	30.8 տ
I.1.2	գրունտը (ρ=2.0)		482 մ ³	964 տ
II. ՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՐԿԱԹԲԵՏՈՆԵ ՀԻՄՔԵՐԻ ԵՎ ՊԱՏԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ				
II.1	Երկաթբետոնե հիմքերի համար օգտագործվող B20 և B7.5 դասի բետոնե խառնուրդ (կվարցային ավազով և բազալտե խճով)		83.4 մ ³	195 տ
II.1.1	Փ22 A500c և Փ8 A240c տիպի ամրանային ցանց			3 տ
II.2	Շինության բետոնե հատակի իրականացում		54 մ ³	129 տ
II.3	Շինության պատերի իրականացման համար օգտագործվող տուֆ քար	9490 հատ	152 մ ³	350 տ
III. ՇԻՆՈՒԹՅԱՆ ԾՊԵՂՆԱՅՐԿԻ ԵՎ ՏԱՆԻՔԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ				
III.1	Տանիքի փայտե տարրերը՝			
III.1.1	Ծպեղ	78 հատ		3.9 տ
III.1.2	Կավարամածի տախտակներ	114 հատ	2.58 մ ³	1.2 տ
III.2	Շինության տանիքի համար օգտագործվող ծածկ			1.8 տ
VI. ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ				
VI.1	Գրունտի ետլիցք և տոփանում շինության հիմքի իրականացումից հետո		398.6 մ ³	797.2 տ

№	Անվանումը	Քանակը	Ճավալը	Ընդհանուր զանգվածը
VI.2	Մնացած գրունտի օգտագործում տարածքի հարթեցման համար		83.4 մ ³	166.8 տ
VI.3	Հողի բերրի շերտի օգտագործում տարածքի բարեկարգման համար		22 մ ³	30.8 տ

5.2.10 Սեպտիկ հորեր` 390 մ³

Գյուղմթերքների շուկայում նախատեսվում է կառուցել 8 բետոնե սեպտիկ հոր: Երկուական սեպտիկ հոր կառուցվելու է յուրաքանչյուր զուգարանի մոտ, և ևս երկու սեպտիկ հոր հյուրատան հարևանությամբ:

Սեպտիկ հորերի կառուցման համար օգտագործվելու է B15 դասի բետոն: Պատերը նախատեսված է իրականացնել 20 սմ հաստությամբ: Հորերի բետոնե հատակը և պատերը լինելու են ամրանավորված: Մինչև բետոնի նախապատրաստական շերտի փռումը գրունտի վերին շերտը խտացվելու է 15-20 սմ ավազային բարձիկով:

Սեպտիկ հորերի կառուցման համար իրականացվող հողային աշխատանքների ծավալը, կիրառվող շինարարական կոնստրուկցիաների և նյութերի անվանացանկը, ինչպես նաև դրանց քանակությունները բերված են ստորև **Աղյուսակ 10**-ում:

Աղյուսակ 10. Սեպտիկ հորերի կառուցման համար իրականացվող աշխատանքների ծավալները, օգտագործվող նյութերի անվանացանկը և քանակները

№	Անվանումը	Քանակը	Ճավալը	Ընդհանուր զանգվածը
I. ՀՈՂԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ				
I.1	Սեպտիկ հորերի իրականացման համար հողային զանգվածի փորում շինարարական տեխնիկայով (գրունտը` ρ=2.0)		567 մ ³	1134 տ
II. ՍԵՊՏԻԿ ՀՈՐԵՐԻ ԲԵՏՈՆԵ ՀԻՄՔԵՐԻ ԵՎ ՊԱՏԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ				
II.1	Բետոնե հորերի համար օգտագործվող B15 դասի բետոնե խառնուրդ		80 մ ³	184 տ
II.2	Φ22 A500c և Φ8 A240c տիպի ամրանային ցանց			2 տ
III. ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ				
III.1	Գրունտի ետլիցք և տոփանում շինության հիմքի իրականացումից հետո		178 մ ³	356 տ
III.2	Մնացած գրունտի օգտագործում տարածքի հարթեցման համար		389 մ ³	778 տ

6. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

Նախատեսվող գործունեության գծային ենթակառուցվածքները պատկերված են իրադրային հատակագծի վրա (**Հավելված 5-ը**): Դրանք են` գոյություն ունեցող օդային գծերը, Երևան-Մեղրի Մ2 միջպետական ավտոճանապարհը, Յովտաշեն տանող միջհամայնքային ճանապարհը, անձրևաջրերի հեռացման համակարգը և ջրատար խողովակները: Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում ենթակառուցվածքների վրա ազդեցություն չի լինելու: Ստորև **Նկար 2**,

3 և 4-ում ներկայացված են նախատեսվող գործունեության վայրի շրջակայքում գտնվող ենթակառուցվածքները:



Նկար 2. Նախատեսվող գործունեության վայրը և դրա հարեվանությամբ գտնվող օդային գիծը



Նկար 3. Նախատեսվող գործունեության վայրի հարևանությամբ գտնվող անձրևաջրերի հեռացման ջրանցքը



Նկար 4. Նախատեսվող գործունեության վայրի մոտ գտնվող ջրատար խողովակները

7. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԸ

Աշխատանքային նախագծով նախատեսվում է Արարատի մարզում՝ Արտաշատի տարածաշրջանի Մխչյան համայնքում կառուցել գյուղմթերքների շուկա: Նշված շուկայի ստեղծումը հնարավորություն կտա գյուղմթերքի արտադրությամբ զբաղվող անհատներին վաճառել իրենց գյուղմթերքները մի վայրում, որտեղ կան բոլոր համապատասխան պայմանները մանրամեծածախ վաճառքի իրականացման համար: Բացի այդ, կստեղծվի մի առևտրային հարթակ, որտեղ անմիջական կապ կհաստատվի գյուղմթերքի վաճառողների և գնորդների միջև: Բացի առևտրային սրահներից գյուղմթերքների շուկան ունենալու է նաև հյուրատուն և պահեստներ: Ընդհանուր առմամբ շուկայում աշխատելու է մոտ 70 մարդ (ղեկավար անձնակազմ, հաշվապահություն, առևտուրը կազմակերպող և կանոնակարգող անձիք, բանվորներ, պահակներ, հավաքարարներ և այլն): Նշված անձնակազմը լինելու է հիմնականում շուկայի հարակից համայնքներից, ինչպես նաև Արտաշատ և Մասիս քաղաքներից: Բացի այդ օրական մոտ 350 տնային տնտեսություն կստանա շուկայում գյուղմթերքի իրացման հնարավորություն: Հարկ է նշել նաև, որ գյուղմթերքների շուկան հենաշարժողական խնդիրներ ունեցող մարդկանց ազատ մուտքի և ելքի համար կահավորված է լինելու հատուկ թեքահարթակներով:

Նախատեսվող գործունեության տարածաշրջանում նմանատիպ առևտրային շուկա չկա: Բնակիչների զգալի մասը իրենց մթերքը իրացնում են վերավաճառողների միջոցով, ինչը մթերքի գնի արհեստական բարձրացման պատճառ է հանդիսանում: Ուստի գյուղմթերքների շուկայի ստեղծումը զգալի դերակատարում կունենա թե՛ հարակից համայնքների և թե՛ տարածաշրջանի սոցիալ-տնտեսական զարգացման գործում: Կստեղծվեն գյուղմթերքների իրացման նոր հնարավորություններ և նոր աշխատատեղեր: Բացի այդ, գտնվելով Մխչյան համայնքի վարչական տարածքում՝ գույքահարկի հարկման արդյունքում կավելանա համայնքի բյուջեն՝ հնարավորություն տալով լուծելու համայնքի սոցիալական այլ խնդիրներ: Հետևաբար, սոցիալական ազդեցության տեսանկյունից նախատեսվող գործունեությունը միանշանակ դրական է:



8. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

8.1 Նախատեսվող գործունեության տարածաշրջանի ֆիզիկա-աշխարհագրական նկարագիրը և ռելիեֆը

Նախատեսվող գործունեության վայրը՝ Մխչյան համայնքը, գտնվում է Արարատի մարզի Արտաշատ համայնքի տարածաշրջանում, որն ամբողջությամբ գտնվում է Արարատյան դաշտավայրի արևելյան մասում: Տարածաշրջանը կառուցվածքային տեսակետից գրաբենասինկլինալային իջվածք է, որը հյուսիսից, արևելքից և հարավ-արևելքից եզրավորվում է Արագածի և Գեղամա լեռնազանգվածներով, Ուրծի շղթայով, իսկ հարավից և արևմուտքից՝ Հայկական պարով, Մեծ և Փոքր Մասիսներով: Հին ծալքավորումների մնացորդները տեղ-տեղ լճապլուվիալ և պրոլուվիալ նստվածքների տակից երկրի մակերես են դուրս գալիս մի քանի տասնյակ մետրի հասնող բլուրների տեսքով: Տարածաշրջանը ունի հզոր, տեղ-տեղ մինչև 400 մ, լճագետային, ալյուվիալ-պրոլուվիալ նստվածքներով, լավային շերտեր: Այն ձգվում է Ախուրյանի գետաբերանից մինչև նեղ ու կարճ Գայլի դրունք հովիտը:


Նախատեսվող գործունեության վայրը գտնվում է տափարակ, տեղ-տեղ ճահճապատ ողողատային հարթության վրա: Այն նախալեռնային անապատային գոտի է, որը զբաղեցնում է Արարատյան դաշտի ցածրադիր տեղամասերը, մինչև 900 մ բարձրությունները: Տարածաշրջանի բնական կամ ֆիզիկաաշխարհագրական չափանիշներն են գետավազանի ռելիեֆը, գետային հոսքերի հիմնական միախառնման հանգույցները և հիդրոլոգիական ցուցանիշները:

8.2 Տարածաշրջանի երկրաբանությունը

Տարածաշրջանն ունի բարդ տեկտոնական և երկաբանահիդրոերկրաբանական կառուցվածք: Երկրաբանական կառուցվածքի ծածկույթը, որը ունի շուրջ 500 մ հաստություն, ներկայացված է չորրորդական հասակի լճագետային նստվածքներով և հրաբխային անդեզիտաբազալտային լավաներով: Նրանում, հիդրոերկրաբանական տեսակետից, ավազա-կավճա-գլաբարային ապարների հերթափոխումը՝ մուգ շագանակավուն և կապտականաչավուն երկու ջրամերժ կավերի տարածուն շերտերով, ստեղծում է բարենպաստ պայմաններ ջրատար հորիզոնների համակարգի (համալիրի) ձևավորման համար:

Նախատեսվող գործունեության վայրի արևելյան մասը եզրավորվում է Գեղամա, Երանոսի և Ուրծի լեռնաշղթաներով (տես **Նկար 5**): Արևմուտքում գոգավորությունը հարում է Կարսի սարահարթին: Գոգավորությունը եզրավորող լեռնազանգվածների երկրաբանական կառուցվածքում մասնակցում են վերին պրոտերոզոյ-քեմբրիի այլափոխված (մետամորֆիզացված) թերթաքարերը, պալեոզոյի (դևոն-պերմ) կարբոնատային ապարները, մեզոզոյի (տրիաս, վերին կավիճ) կավավազաքարային և կրաքարամերգելային գոյացումները, պալեոգենի և ստորին միջին նեոգենի ծովային ֆացիայի նստվածքները, որոնք ինտենսիվ ծալքավորված են և կան տարբեր կազմի և հասակի ինտրուզիվ մարմիններով: Վերոհիշյալ ապարների տարբեր հատվածների վրա խիստ աններդաշնակ, գրեթե հորիզոնական տեղադրված են վերին պլիոցեն-չորրորդական հասակի անդեզիտա-բազալտային կազմի լավաների ծածկոցներն ու հոսքերը, հրաբխային խարամները, մոխիրը, պեմզաները, ինչպես նաև լճագետային և ցամաքային փոխրաբեկորային գոյացումները: Պլիոցեն-չորրորդական գոյացումների համալիրը ծալքավորված չի, տարածված է գոգավորությունը եզրավորող լեռնազանգվածներում (լավաները, նրանց հրաբեկորային տարբերակները) և միջլեռնային գոգավորություններում (լճագետային նստվածքներ): Լավային ապարները ինտենսիվ ճեղքավորված ու

Ծակոտկեն են, իսկ լճագետային նստվածքները ներկայացված են կտրվածքում հերթափոխվող կավային և ավազազլաքարային շերտերով: Արարատյան միջլեռնային գոգավորության երկրաբանական վերին հարկը ներկայացված է վերոհիշյալ լճագետային նստվածքներով, որոնք պարփակում են գոգավորությունում լճային ռեժիմի ժամանակ Մեծ և Փոքր Արարատների, Արագածի, Արա լեռների հրաբուխներից արտավիժած լավային միջֆորմային հոսքերի ձևով: Վերջինները հանդիսանում են լեռնավանդակի լավային ծածկույթի ստորերկրյա ջրերի գոգավորություն տեղափոխող ուղիներ:



Պայմանական նշաններ

- 18** - Գեղամի լեռնաշղթա (140 կմ), ամենաբարձր կետը՝ Աժդահակ (3597 մ)
- 19** - Երանոսի լեռնաշղթա (40 կմ), ամենաբարձր կետը՝ Հանդասար (2239 մ)
- 20** - Ուրծի լեռնաշղթա (20 կմ), ամենաբարձր կետը՝ Ուրծ (2446 մ)

- - Նախատեսվող գործունեության վայրը
- - լեռնաշղթայի ամենաբարձր կետը

Նկար 5. Նախատեսվող գործունեության վայրի տեղադիրքը լեռնաշղթայի համակարգում


8.3 Հիդրոերկրաբանություն

Նախատեսվող գործունեության տարածաշրջանի Արարատյան գետահովիտը հանդիսանում է Արարատյան արտեզյան ավազանի ստորերկրյա ջրերի կուտակման և բեռնաթափման մարզը: Այն գտնվում է Արաքս գետի ավազանի միջին հոսանքում և ձգվում է հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք՝ շուրջ 120 կմ երկարությամբ և 10-30 կմ լայնությամբ: Գտնվում է 800-1000 մ բացարձակ նիշերի սահմաններում, զրավում է շուրջ 1300 կմ² մակերես և իրենից ներկայացնում է ստորերկրյա ջրերի շտեմարան, ուր 42 ջրերը մուտք են գործում դաշտավայրը եզրավորող Արարատի և Արագածի, Գեղամա, Ուրցի ու Հայկական պար լեռնաշղթաներից: Տարածաշրջանում Այստեղ ապարները ներկայացված են հնահրաբխային էֆուզիաներով (բազալտներ, անդեզիտա-բազալտներ, դացիտներ, խարամներ): Գոլորշիացումը գերազանցում է մթնոլորտային տեղումներին:

Արարատյան դաշտը իրենից ներկայացնում է միջլեռնային իջվածք, որը կապված է Արաքս գետի հետ իր ձախափնյա՝ Ախուրյան, Քասախ, Սևջուր (Մեծամոր), Հրազդան, Ագատ, Վեդի վտակներով,

որոնց արտաբերման կոներով և լավատակ հնահուներով էլ տեղի է ունենում դաշտավայրի ստորերկրյա ջրերի սնումը: Գրունտային ջրատար հորիզոնի ապարները ներկայացված են կավավազներով, ավազակավերով և կավերով տարբեր հատիկայնության ավազների և կոպիճների մեծ հզորության ենթաշերտերով և ոսպնյակաձև առաջացումներով: Գրունտային ջրերի սնումը հիմնականում կատարվում է իրենցից ներքև տեղադրված ճնշումային ջրերի ուղղաձիգ բեռնաթափման, ինչպես նաև ոռոգման, ոռոգման ջրանցքներից ջրային կորուստների և գետային ջրերի ինֆիլտրացիայի հաշվին: Բեռնաթափումը կատարվում է գետային ցանցում, կոլեկտորադրենաժային ցանցերում և ծախսվում է գոլորշիացման վրա: Նշված գործոնների ազդեցությամբ և փոխհարաբերությամբ էլ ձևավորվում է գրունտային ջրերի ռեժիմը: Թույլ ճնշումային ջրատար հորիզոնը ներկայացված է ավազա-կոպիճազաքարային նստվածքներով և կավերի փոփոխական հաստության ոսպնյակաձև առաջացումներով: Թույլ ճնշումային ջրերը մեծամասամբ զուրկ են դրական ճնշումից, սակայն ամենուրեք բարձր են կանգնում գրունտային ջրերի մակարդակից: Ուժեղ ճնշումային ջրատար հորիզոնը տեղադրված է կապտականաչավուն կավերի շերտի տակ: Այս ջրատար հորիզոնի ջրերն ունեն դրական պիեզոմետրիական մակերևույթ, որը հարթավայրի եզրամասերից դեպի կենտրոն մեծանում է հասնելով 20 և ավելի մետրի: Նախատեսվող գործունեության վայրը գտնվում է Արարատյան արտեզիան ավազանի գետա-լճային և լավային հոսքերի ճնշումային ջրատար համալիրի մեջ, որտեղ գերակշռում են կավավազային, ավազային, գլախարային, բազալտային և անդեզիտա-բազալտային ապարները (տես **Նկար 6**):

Արարատյան գոգավորության սխեմատիկ հիդրոերկրաբանական քարտեզ




Նկար 6. Նախատեսվող գործունեության վայրի տեղադիրքը Արարատյան գոգավորության հիդրոերկրաբանական քարտեզում

8.4 Սեյսմատեկտոնիկ և սողանքային պայմաններ

Հայաստանի տարածքը բնորոշվում է ուժեղ զարգացած սողանքային շարժընթացներով: Հայաստանի տարածքում գոյություն ունեն 2000-ից ավելի խոշոր սողանքներ (մոտ 500 կմ² տարածք), որոնցից շատերը գտնվում են բնակավայրերի սահմաններում: ՀՀ տարածքի սողանքային տեղաշարժերի տեսակները շատ հաճախ տարանջման ընթացքում փոխակերպվում են փլվածք-սահք-հոսք սխեմայով: Ժամանակակից և անցյալի ակտիվությամբ սողանքային շարժընթացների մեծամասնությունը կապված է ակտիվ խզումնային գոտիների հետ, որոնց միջոցով տեղի են ունենում դանդաղ և երկրաշարժաժին տեղաշարժեր:

Մարզի առկա են սողանքային գոտիներ, որոնց տարածքները կազմում են հանրապետության սողանքային հողատարածքների 2.5 %-ը: Արարատի մարզի տարածքում սողանքային երևույթները զարգացած են հիմնականում հյուսիս-արևելյան մասի նախալեռնային բնակավայրերում: Մարզը գտնվում է ոչ ակտիվ սեյսմիկ գոտում և սողանքների ակտիվացումը հիմնականում կրում է սեզոնային բնույթ և առաջանում է հիմնականում գրունտային զանգվածների գրավիտացիոն տեղաշարժով: Նախատեսվող գործունեության վայրում սողանքային գոտիները բացակայում են: Ստորև **Նկար 6**-ում ներկայացված է սողանքային գոտիների և նախատեսվող գործունեության վայրի տեղադիրքը: Նախատեսվող գործունեության տարածաշրջանի սեյսմատեկտոնական պայմանները բարենպաստ են: Գրունտների առավելագույն արագացումները տատանվում են 0.2-ից մինչև >0.25 g, որը համապատասխանում է 8 - 8.25 բալի: Նախատեսվող գործունեության տարածաշրջանում կան սողանքային գոտիներ, սակայն բուն նախատեսվող գործունեության վայրում այդ սողանքային գոտիները բացակայում են: Ստորև **Նկար 7**-ում ներկայացված է նախատեսվող գործունեության վայրի սեյսմիկ և սելավային ռիսկերի, ինչպես նաև սողանքային գոտիների առկայությունը:




Նկար 7. Նախատեսվող գործունեության վայրի սեյսմիկ և սելավային ռիսկերը

8.5 Տարածաշրջանի հողերի նկարագիրը

Արարատյան հարթավայրում առավել ցածրադիր տեղերում ձևավորվել են հումուսով աղքատ գորշ հողեր՝ բաց գորշագույն հողեր ու տիպիկ գորշահողեր՝ աղակալած տարածքներով: Անապատի համար բնորոշ այս հողերի առաջացմանը նպաստել են կլիմայի չորությունը և բուսական ծածկույթի աղքատությունը: Նախատեսվող գործունեության տարածքի հողերը պատկանում են մուգ շագանակագույն հողերի տիպին:

Մուգ շագանակագույն հողերը մակերեսից ունենում են մուգ, երբեմն գորշավուն երանգավորում: Կուլտուրականացված շագանակագույն հողերը ձևավորվում են նախալեռնային հարթությունների վրա, տարբերվում են համեմատաբար հզոր հումուսային հորիզոնով (50-70 սմ) թույլ դիֆերենցված համասեռ պրոֆիլի կառուցվածքով: Հին ոռոգելի հողատեսքերը հիմնականում լվացված են և առանձնանում են որոշակի խտացվածությամբ: Այս հողերը բնութագրվում են խայտաբղետ մեխանիկական կազմով, որը պայմանավորված է ռելիեֆի լիտոլոգիական պայմաններով, ինչպես նաև ներհողային հողմնահարման և ոռոգման ազդեցություններով: Հողերի ձևավորման համար հիմք են հանդիսացել կարծր ապարների հողմնահարման կյուրերը, որոնք առանձնանում են ապարների բեկորային բարձր պարունակությամբ:

Ստորև **Նկար 8**-ում ներկայացված է նախատեսվող գործունեության վայրի (բարձրությունը ծովի մակարդակից 860 մ) հողային կատեգորիան:



Նկար 8. Նախատեսվող գործունեության վայրի հողերի կատեգորիան

8.6 Կլիման և օդերևութաբանական պայմանները

Մխչյան գյուղը գտնվում է ծովի մակարդակից ունի 860 մ բարձրության վրա: Կլիման չոր խիստ ցամաքային է: Ձմեռները սկսվում են դեկտեմբերի կեսերին, իսկ ամառը տևական է՝ մայիսից մինչև հոկտեմբեր: Հաճախ լինում են խորշակներ, որոնք զգալի վնաս են հասցնում գյուղատնտեսությանը: Բնական լանդշաֆտները կիսանապատներ են, որոնք ոռոգման արդյունքում վեր են ածվել կուլտուր-ոռոգելի լանդշաֆտի: Ագրոկլիմայական տեսակետից համայնքն ընկած է բացարձակ ոռոգման գոտում:

8.6.1 Զերմաստիճանը

Տարածաշրջանում օդի բացարձակ նվազագույնը աստիճանը -29°C է: Բացարձակ առավելագույն ջերմաստիճանը կազմում է 43°C , ամենատաք ամսվա միջին ջերմաստիճանը՝ 25.3°C :

Աղյուսակ 11. Օդի միջին ամսական և տարեկան ջերմաստիճանը, $^{\circ}\text{C}$

Բնակավայրի օդերևութաբանական կայանի անվանումը	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների, $^{\circ}\text{C}$												Միջին տարեկան, $^{\circ}\text{C}$	Բացարձակ նվազագույն, $^{\circ}\text{C}$	Բացարձակ առավելագույն, $^{\circ}\text{C}$
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			
Արտաշատ	-3.6	-0.9	5.6	12.7	17.5	21.5	25.3	24.8	19.8	13	6	-0.6	11.8	-29	43

8.6.2 Խոնավությունը

Օդի միջին տարեկան հարաբերական խոնավությունը կազմում է 64%: Ամենացուրտ ամսվա օդի միջին հարաբերական խոնավությունը կազմում է 64%, իսկ ամենաշոգ ամսվանը՝ 32%:

Աղյուսակ 12. Օդի հարաբերական խոնավությունը, %

Բնակավայր, օդերևութաբանական կայանի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը, %														
	ըստ ամիսների												Միջին տարեկան, %	Միջին ամսական ժամը 15-ին	
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր		ամենացուրտ ամսվա, %	ամենաշոգ ամսվա, %
Արտաշատ	78	73	63	58	59	54	51	52	57	68	73	79	64	64	32

8.6.3 Աթևույթության տեղումները

Միջին տարեկան տեղումների քանակը կազմում է 254 մմ: Առավելագույնը դիտվում է մայիս ամսին՝ 40 մմ, նվազագույնը օգոստոս ամսին՝ 6 մմ:

Աղյուսակ 13. Մթնոլորտային տեղումները, %


Բնակավայրի, օրերի և օրաբաժանական կայանի անվանումը	Տեղումների քանակը $\frac{\text{միջին ամսական օրական առավելագույն}}{\text{, մմ}}$												Ձևածածկույթ			
	ըստ ամիսների											Տարեկան	Առավելագույն տասնօրյակային բարձրությունը, մմ	Տարվա մեջ ձևածածկույթով օրերի քանակը	Ձյան մեջ շրի առավելագույն քանակը, մմ	
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր					Դեկտեմբեր
Արտաշատ	18	18	27	36	40	25	11	6	10	22	24	17	254	40	36	46
	18	20	32	36	43	34	27	22	28	36	31	25	43			

8.6.4 Քամի


Դիտարկվող տարածքում քամու միջին արագությունների բաշխվածությունը տարվա տարբեր ժամանակաշրջաններում բերված են **Նկար 9**-ում:

Քամու միջին արագության ամենամեծ արժեքը գրանցված է հունվար ամսին հարավ-արևելյան ուղղությամբ և կազմում է 3.1 մ/վ: Տարվա տարբեր ժամանակաշրջաններում քամու միջին ամսական արագության ամենամեծ արժեքը գրանցվել է ապրիլ ամսին և կազմում է 0.6 մ/վ, իսկ միջին տարեկան արագությունը հավասար է 0.4 մ/վ: Ուժեղ քամիներով օրերի քանակը (≥ 15 մ/վ) 7-ն է:

Քամու ուղղությունների կրկնելիության պատկերները բերված են **Նկար 10**-ում: Ինչպես երևում է **Նկար 10**-ից դիտարկվող տարածքում գերակշռում են հարավ-արևելյան ուղղությամբ քամիները: Ամենամեծ կրկնելիությունը դիտվում է ապրիլ ամսին արևելյան ուղղությամբ և կազմում է 27%:



Նկար 9. Քամու միջին արագությունների բաշխվածությունը



Նկար 10. Քամու ուղղությունների կրկնելիությունը

8.7 Նախատեսվող գործունեության տարածաշրջանի բուսական աշխարհը

Արարատի մարզը համարվում է ՀՀ-ում տնտեսապես ամենազարգացած մարզերից մեկը: Առավելապես կարևորվում է մարզի գյուղատնտեսական նշանակությունը: Ունենալով Արարատյան դաշտի մի մեծ հատված՝ այստեղ է մշակվում ՀՀ գյուղատնտեսական մշակաբույսերի զգալի մասը: Մարզում զարգացած է երկրագործությունը: Հիմնական պտղատու այգիներն են խաղողի, ծիրանի, դեղձի այգիները, մշակվում են նաև կեռաս, սալոր, խնձոր, տանձ և այլն: Մարզի հիմնական մշակաբույսերն են ձմերուկը, սեխը, լոլիկը, վարունգը, լոբին, սիսեռը, կանաչ պղպեղը, սմբուկը և ցորենազգիների դասին պատկանող բույսերը:

Նախատեսվող գործունեության տարածաշրջանում գերակշռում են անապատային հողերը: Ավելի տարածված են հալոֆիլ և գիպոֆիլ անապատները: Անապատի բուսականությունը աղքատ է: Աճում են չորասեր, աղասեր բուսատեսակներ, խոնավ վայրերում եղեգն: Նախալեռնային կիսաանապատային գոտու գորշահողերի վրա աճում են ֆրիգանոֆային չորասեր բույսեր, էֆեմերներ, հոտավետ օշինդրը և այլն:

Հալոֆիլ անապատներին բնորոշ բույսերն են՝ սոլերոս (*Salicornia europaea*), կալիդիում (*Kalidium caspicum*), աղահասկ (*Halostachys caspica*), բորակաբույս (*Nitraria schoberi*): Հալոֆիլ

համակեցությունների հետ է կապված Էնդեմիկ տեսակ՝ արարատյան որդան կարմիրի (*Porphyrophora hammelii*) գոյությունը, որը զարգանում է հիմնականում որդանախտի (*Aeluropus littoralis*) արմատների վրա:

Գիպսոֆիլ անապատները բնորոշ են արաքսյան հարթավայրը շրջապատող լեռնաշղթային (Երանոս, Երախ, Ուրց): Գիպսոֆիլ անապատներին բնորոշ բույսեր են՝ սապնարմատ (*Gypsophila*) ցեղի ներկայացուցիչները, հալանտիումը (*Halanthium rarifolium*), մոլոկան Թախթաշյանի (*Lactuca takhtadzhanii*), զուգատերև (*Zygophyllum atriplicoides*) և այլն: Տարածաշրջանում հանդիպում են նաև՝ գեղաձևկիկ մատիտեղանման (*Calligonum polygonoides*), հազարատերևուկ նեղատերև (*Achillea tenuifolia*), եղջերախոտ, եղնաբղեղ ավազուտային (*Ceratocarpus arenarius*), գեյդիցիա ծաղկավոր (*Seidlitzia florida*): Աճում են նաև այլ չոր բույսեր՝ տերեփուկ, երիցուկ, իշակաթնուկ:

Նախատեսվող գործունեության տարածաշրջանում հանդիպող՝ ՀՀ կարմիր գրքում և ԲՊՄՍ Կարմիր ցուցակում գրանցված բուսատեսակների¹ ցուցակը բերված է ստորև Աղյուսակ 14-ում, իսկ դրանց լուսանկարները՝ Նկար 11-ում:

Աղյուսակ 14. Նախատեսվող գործունեության տարածաշրջանում հանդիպող՝ ՀՀ Կարմիր գրքում ընդգրկված հազվագյուտ, անհետացող բուսատեսակները

№	Բուսատեսակներ		ԲՊՄՍ-ի Կարմիր ցուցակում ունեցած կատեգորիան ²
	Չայերեն	Լատիներեն	
1	Խնկեղեգ ճահճային	<i>Acorus calamus</i> L.	EN
2	Չացհամեն գլխիկավոր	<i>Trigonella capitata</i> Boiss.	EN
3	Չիրիկ մուսուլմանական	<i>Iris musulmanica</i> Fomin	EN
4	Կղմուխ Օշեի	<i>Inula aucheriana</i> DC.	EN
5	Բիեներցիա շուրջաթև	<i>Bienertia cycloptera</i> Bunge	CR
6	Միկրոկնեմում մարզանանման	<i>Microcnemum coralloides</i>	EN



Խնկեղեգ ճահճային - Acorus calamus L.



Չացհամեն գլխիկավոր - Trigonella capitata Boiss.

¹ Հայաստանի Հանրապետության բույսերի Կարմիր գիրք


² EN (*Endangered*) - վտանգված տեսակ
CR (*Critically Endangered*) - կրիտիկական վիճակում գտնվող տեսակ



Հիրիկ մուսուլմանական - *Iris musulmanica Fomin*



Կղմուխ Օշեի - *Inula aucheriana DC.*



Բիեներցիա շուրջաթև - *Bienertia cycloptera Bunge*



Միկրոկնեմում մարգանսանման - *Microcnemum coralloides*

Նկար 11. Նախատեսվող գործունեության տարածաշրջանում հանդիպող` ՀՀ Կարմիր գրքում ընդգրկված հազվագյուտ, անհետացող բուսատեսակների լուսանկարները

8.8 Նախատեսվող գործունեության տարածաշրջանի կենդանական աշխարհը

Նախատեսվող գործունեության տարածաշրջանի կիսանապատային ցամաքային Էկոհամակարգի կենդանական աշխարհը բազմազան է: Հայաստանի կիսանապատային ցամաքային Էկոհամակարգերում գրանցված է ողնաշարավոր կենդանիների 101 տեսակ (երկկենցաղների` 4, սողունների` 30, թռչունների` 23, կաթնասունների 44) և անողնաշար կենդանիների 1687 (այդ թվում` փափկամարմինների 59, սարդակերպերի 97, միջատների 1531): Նախատեսվող գործունեության տարածաշրջանում հանդիպում են անողնաշարավոր կենդանիներից 51, իսկ ողնաշարավորներից 92 տեսակ: Կիսանապատներում հանդիպում են բազմաթիվ Էնդեմիկ անողնաշար տեսակներ, ներառյալ միջերկրածովային, իրանական, կովկասյան և դրիմյան ծագում ունեցողները: Աղուտային հալոֆիլ համակենցությունների հետ է կապված Էնդեմիկ տեսակի` Արարատյան որդանի (*Porphirophora hamelii*) գոյությունը:

Տարածաշրջանում ողնաշարավոր կենդանիներից հանդիպում են հետևյալ ներկայացուցիչները` գորշուկը, նապաստակը, ճահճակուղբը, ժայռային մողեսը, լորտու սովորականը, դաշտամուկը, քարակզաքիսը և այլն: Անողնաշարավորներից հանդիպում են` անձրևավորողը, մրջյունը, ծղրիղը, ճռիկը, մորեխը և այլն: Սողուններից հանդիպում են գյուրգա, հայկական իծ, լորտուներ, Արևմտյան վիշապիկը (*Eryx jaculus*) և այլն:

Թռչուններից հանդիպում են տնային ճնճուկը (*Passer domesticus*), մոխրագույն ագռավը (*Corvus corone*), անտառային արտույտը (*Lullula arborea*), գյուղական ծիծեռնակը (*Hirundo rustica*), եղինջաթռչնակը (*Troglodytes troglodytes*), ժայռային ծիծեռնակը (*Ptyonoprogne rupestris*):

Գետերի իխտիոֆաունան ներկայացնում են բրամը (*Abramis brama*), ծածանը (*Cyprinus carpio*), սովորական լոբոն (*Silurus glani*) և այլն:

Նախատեսվող գործունեության տարածաշրջանում հանդիպող՝ ՀՀ կարմիր գրքում և ԲՊՄՄ Կարմիր ցուցակում գրանցված կենդանատեսակների³ ցուցակը բերված է ստորև Աղյուսակ 15-ում, իսկ դրանց որոշների լուսանկարները՝ Նկար 12-ում:

Աղյուսակ 15. Նախատեսվող գործունեության տարածաշրջանում հանդիպող՝ ՀՀ Կարմիր գրքում ընդգրկված հազվագյուտ, անհետացող կենդանատեսակները

№	Կենդանատեսակ		ԲՊՄՄ-ի Կարմիր ցուցակում ունեցած կատեգորիան ⁴
	Հայերեն	Լատիներեն	
1	Մեծաչք ճպուռ	<i>Lestes macrostigma</i>	VU
2	Սիմպեկմա ճպուռ	<i>Sympecma paedisca</i>	VU
3	Վան Բրինգի նետիկ	<i>Coenagrion vanbrinkae</i> Lohmann	DD
4	Սևծովյան ճպուռ	<i>Libellula pontica</i> Selys	NT
5	Ռուբենյանի բնդեռիկ	<i>Adoretus rubenyani</i> Kalashian	EN
6	Հսկա գիշաճանճ	<i>Satanas gigas</i> Eversmann	VU
7	Երկարատու սցինկ	<i>Eumeces schneideri</i>	VU
8	Վարդագույն հավալուսն	<i>Pelecanus onocrotalus</i> Linnaeus	VU
9	Մեծ ձկնկուլ	<i>Phalacrocorax carbo</i> Linnaeus	VU
10	Փոքր ձկնկուլ	<i>Phalacrocorax pygmaeus</i> Pallas	VU
11	Թշշան կարապ	<i>Cygnus olor</i>	VU
12	Ճչան կարապ	<i>Cygnus cygnus</i>	VU
13	Մոխրագույն սագ	<i>Anser anser</i>	VU
14	Կարմիր բադ	<i>Tadorna ferruginea</i>	VU
15	Սպիտակաաչք սուզաբադ	<i>Aythya nyroca</i>	VU
16	Ծվվան սագ	<i>Anser erythropus</i>	VU
17	Գիշանգղ	<i>Neophron percnopterus</i> Linnaeus	EN
18	Օձակեր արծիվ	<i>Circus gallicus</i>	VU
19	Տափաստանային մկնաճուռակ	<i>Circus macrourus</i>	EN
20	Եվրոպական ճնճաճուռակ	<i>Accipiter bre</i>	VU
21	Տափաստանային արծիվ	<i>Aquila nipalensis orientalis</i> Hodgson	VU

³ Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գիրք

⁴ EN (*Endangered*) - վտանգված տեսակ,

VU (*Vulnerable*) - խոցելի տեսակ,

DD (*Data Deficient*) - տվյալների անբավարարություն և այլն

NT (*Near Threatened*) - Վտանգված տեսակին մոտ գտնվող

№	Կենդանատեսակ		ԲՊՄՄ-ի Կարմիր ցուցակում ունեցած կատեգորիան ⁴
	Հայերեն	Լատիներեն	
22	Բլրային արծիվ	Aquila heliaca Savigny	VU
23	Աղավնաբազե	Falco columbarius Linnaeus	DD
24	Փոքր ճագարամուկ	Allactaga elater Lichtenstein	EN
25	Սուլթանական հավ	Porphyrio porphyrio	DD
26	Կոցար կաճաղակ	Haematopus ostralegus Linnaeus	VU
27	Կրկնակոցար	Gallinago media	VU
28	Ոտնացուպիկ	Himantopus himantopus	VU
29	Բզակտուց	Recurvirostra avosetta Linnaeus	VU
30	Մարգագետնային ծիծառակոցար	Glareola pratincola	VU
31	Ներկարար	Coracias garrulus	VU
32	Կարմրակատար շամփրուկ	Lanius senator	VU
33	Սպիտակափող սոխակ	Irania gutturalis	DD
34	Հնդկական եղեգնաթռչնակ	Acrocephalus agricola	EN



Երկարատու սցիլնկ - *Eumeces schneideri*



Մեծաչք ճպուռ - *Lestes macrostigma*



Հսկա գիշաճանճ - *Satanas gigas Eversmann*



Օձակեր արծիվ - *Circaetus gallicus*



Փոքր ձկնկուլ - *Phalacrocorax pygmaeus Pallas*



Ներկարար - *Coracias garrulus*



Հնդկական եղեգնաթռչնակ - *Acrocephalus agricola*



Տափաստանային մկնաճուռակ - *Circus macrourus*



Մոխրագույն սագ - *Anser anser*




Սպիտակափող տխակ - *Irania gutturalis*

Նկար 12. Նախատեսվող գործունեության տարածաշրջանում հանդիպող` ՀՀ Կարմիր գրքում ընդգրկված հազվագյուտ, անհետացող կենդանատեսակներից որոշների լուսանկարները

8.9 Տարածաշրջանի հատուկ պահպանվող տարածքները

Նախատեսվող գործունեության վայրից դեպի հյուսիս-արևելք 15 կմ հեռավորության վրա գտնվում է "Խոսրովի անտառ" պետական արգելոցը, իսկ 17 կմ հեռավորության վրա` "Էրեբունի" պետական արգելավայրը: Դեպի հարավ-արևելք 15 կմ հեռավորության վրա գտնվում է "Խոր Վիրապ" պետական արգելավայրը, իսկ 22 կմ հեռավորության վրա` Գոռավանի ավազուտներ" պետական արգելավայրը:

Ստորև **Նկար 13**-ում ներկայացված է նախատեսվող գործունեության տարածաշրջանին մոտ գտնվող հատուկ պահպանվող տարածքները:



Նկար 13. Նախատեսվող գործունեության տարածաշրջանին մոտ գտնվող հատուկ պահպանվող տարածքները

"*Խոսրովի անտառ*" պետական արգելոցը հիմնադրվել է 1958 թվականին: Արգելոցը գտնվում է Արարատի մարզում Արարատյան դաշտի հարևանությամբ՝ Գեղամա լեռնաշղթայի լեռնաբազուկների, Երանոսի և Երախի լեռների վրա: Այն զբաղեցնում է 23213.5հա տարածք, տեղակայված է ծովի մակարդակից 700-ից մինչև 2800 մ բարձրության վրա:

"*Գոռավանի ավազուտներ*" պետական արգելավայրը կազմավորվել է 1958թ-ին: Այն գտնվում է ՀՀ Արարատի մարզի Արարատյան գոգավորության նախալեռնային թեք հարթություններում՝ Գոռավան գյուղական համայնքի վարչական սահմաններում: Չունենալով պահպանություն իրականացնող մարմին և աշխատակազմ՝ 2007թ-ին արգելավայրը հանձնվել է «Խոսրովի անտառ» պետական արգելոց ՊՈԱԿ-ի ենթակայությանը:

"*Խոր Վիրապ*" պետական արգելավայրը կազմավորվել է 25.01.2007 թ.-ին: Այն գտնվում է Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Փոքր Վեդի գյուղական համայնքի վարչական սահմաններում, Արաքս գետի ձախակողմյան մասի Խոր Վիրապ եկեղեցական համալիրի և Հայաստանի հնագույն մայրաքաղաք Արտաշատի աջակողմյան հատվածում գտնվող՝ 50,28 հա խոնավ տարածքի վրա:

"*Էրեբունի*" պետական արգելավայրը գտնվում է Հայաստանի Հանրապետության Արարատի մարզում, Երևանից 8 կմ հարավ-արևելք: Կազմավորվել է 1981 թ.-ին՝ Էրեբունի վարչական շրջանի տարածքում, կիսասանապատային և լեռնատափաստանային գոտիների անցումային հատվածում՝ ծովի մակերևույթից 1300-1450 մ բարձրություններում՝ դաշտավլուկագիների վայրի



ազգակիցների (մասնավորապես վայրի ցորենների աշխարհում եզակի գենոֆոնդի) պահպանության նպատակով: Այժմ արգելավայրը զբաղեցնում է 120 հա տարածք:

8.10 Նախատեսվող գործունեության տարածաշրջանի համայնքների նկարագիրը և սոցիալ տնտեսական վիճակը

Մխչյան համայնքը գտնվում է Արարատի մարզում, ծովի մակերևույթից 860 մ բարձրության վրա՝ Արարատյան դաշտավայրում: Համայնքը սահմանակից է մարզի հետևյալ համայնքներին՝ Մրգավետ, Յովտաշեն, Դիմիտրով, Արաքսավան, Բյուրավան, Նշավան և Արևաբույր (տես **Նկար 14-ը**): Ստորև ներկայացված է Մխչյան համայնքի և հարակից համայնքների սոցիալ տնտեսական վիճակը:

Մխչյան համայնք

- Մակերեսը՝ 598.47 կմ²,
- Բնակչությունը՝ 5100 մարդ,
- Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 860 մ,
- Հեռավորությունը մարզկենտրոն Արտաշատից՝ 10 կմ,
- Մայրաքաղաք Երևանից՝ 20 կմ:

Գյուղը հիմնադրվել է 1828 թ.-ին Պարսկաստանի Խոյ և Սալմաստ գավառներից տեղահանված հայերով: Նախկինում այն կոչվել է Իմանշալու, 1935թ.-ից վերանվանվել է Մխչյան: Գյուղը ունի մոտ 120 տարեկան եկեղեցի, որը վերանորոգվել է և այժմ գործում է:

Համայնքի բնակչության մինչաշխատունակ տարիքի բնակիչները կազմում են 23%, աշխատունակները՝ 65%, հետաշխատունակները՝ 12%: Գյուղն ունի առկա 1304 տնտեսություն: Ունի 2 դպրոց, դրանցից առաջինը հիմնադրվել է 1883 թ.-ին, մանկապարտեզ, բուժկետ, կապի հանգույց: Արդյունաբերության ոլորտում զարգացած է սննդի արդյունաբերությունը: Համայնքում գործում է կոնյակի հումքի մշակման արտադրամաս: Համայնքի մոտ է կառուցված Մխչյանի ջրհան կայանը, որը Սև ջրի աղբյուրները և արտեզյան ջրերը մղում է Արտաշատի ջրանցք և դրանով ոռոգում տեղի գյուղատնտեսական հողահանդակները: Համայնքի տնտեսության մասնագիտացման ճյուղը գյուղատնտեսությունն է, համախառն բերքի մեծ մասը տալիս է բուսաբուծությունը: Գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են շուրջ 657 հա: Համայնքի հողերի հիմնական մասն օգտագործվում են որպես վարելահողեր, պտղատու և խաղողի այգիներ: Համայնքում բնակիչները զբաղվում են այգեգործությամբ, խաղողագործությամբ, դաշտավարությամբ, բանջարաբուծությամբ: Մշակում են ջերմասեր բանջարաբուստանային կուլտուրաներ, ինչպես նաև հացահատիկ: Չբաղվում են կաթնամսատու անասնապահությամբ, թռչնաբուծությամբ: Համայնքի հիմնախնդիրների մեջ կարևորվում է ոռոգման ջրի հիմնախնդիրը, գյուղատնտեսական մթերքների իրացումը, գյուղամիջյան ճանապարհների վերանորոգումը:



Յովտաշեն համայնք

Մակերեսը՝ 2.1 կմ²,

Բնակչությունը՝ 1250 մարդ,

Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 827 մ,

Ջեռավորությունը մարզկենտրոն Արտաշատից՝ 15 կմ,

Մայրաքաղաք Երևանից՝ 25 կմ:

Յովտաշեն համայնքը գտնվում է Արարատի մարզի Արտաշատի տարածաշրջանում: Համայնքը հիմնադրվել է 1920-ական թվականներին: Համայնքի բնակիչներն եղել են ադրբեջանցիներ: 1930-ական թվականներին գյուղում բնակություն են հաստատել Արևմտյան Հայաստանից եկած ընտանիքներ՝ Սուրմալուից, Նախիջեվանից, Նուխից: 1950-ական թվականներին Արմավանի շրջանի Հացավան և այլ գյուղերից, ինչպես նաև Մարտունու շրջանի գյուղերից եկածները: 1970-ական թվականներին Վայքի շրջանից՝ հիմնականում խնձորուտից: Գյուղը նախկինում անվանվել է Մուղան: Գյուղն ընկած է Հրազդան գետի ձախ ավիին՝ Արարատյան հարթավայրում:

Համայնքի բնակչության 48% տղամարդիկ են, իսկ կանայք՝ 52%: Մինչաշխատունակ տարիքի բնակչությունը կազմում է 15.8%, աշխատունակ տարիքի ներկայացուցիչները՝ 79.2%, հետաշխատունակները՝ 5.0%: Համայնքը ունի 300 տնտեսություն: Համայնքում կա նաև մշակույթի տուն, դպրոց, գրադարան, բուժկետ, մանկապարտեզ:

Համայնքի տնտեսության մասնագիտացման ճյուղը գյուղատնտեսությունն է: Համախառն բերքի մեծ մասը տալիս է բուսաբուծությունը: Գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են շուրջ 283.71 հա: Գյուղատնտեսական հողահանդակները ոռոգվում են, դրանք զբաղեցնում են ողջ մակերեսի 69%: Համայնքի հողերի 40.9% օգտագործվում է որպես վարելահողեր՝ զբաղեցնելով մոտ 166.88 հա: Պտղատու և խաղողի այգիները կազմում են համապատասխանաբար 12.76 հա և 4.30 հա: Համայնքի բնակիչները զբաղվում են այգեգործությամբ, խաղողագործությամբ, դաշտավարությամբ, բանջարաբուծությամբ: Մշակում են ջերմասեր բանջարաբոստանային կուլտուրաներ, պտուղներ: Բնակիչների զբաղվում են նաև կաթնամսատու անասնապահությամբ: Համայնքի հիմնախնդիրների մեջ գլխավորներն են՝ խմելու ջրի պակասը, գյուղամիջյան ճանապարհների և կուլտուրայի տան վերանորոգումը:

Մխչյան համայնքի և հարակից համայնքների տեղադիրքը, ինչպես նաև դրանց միջև ընկած հեռավորությունները, ներկայացված են ստորև **Նկար 14**-ում:



Նկար 14. Նախատեսվող գործունեության և մոտակա գյուղերի տեղադիրքը

8.11 Պատմամշակութային և բնության հուշարձանները

ՀՀ Կառավարության 2002թ. հունվարի 24-ին թիվ 65-Ն որոշմամբ հաստատված՝ Արարատի մարզի հուշարձանների պետական ցուցակի համաձայն, Մխչյան համայնքի տարածքում կան թվով 3 պատմամշակութային հուշարձաններ, որոնք ներկայացված են ստորև Աղյուսակ 16-ում:

Աղյուսակ 16. Մխչյան համայնքի պատմամշակութային հուշարձանները

Հուշարձանի անվանումը	Կառուցման տարեթիվը	Հասցեն	Նշանակությունը՝ հանրապետական/ տեղական	Հավելյալ նշումներ
Գերեզմանոց	19-20 դդ.	Կյուսիս-արևելյան եզրին	S	
Եկեղեցի Սբ. Հովհաննես	1890 թ.	Երկաթուղայինների փող.	S	
Հուշարձան Երկրորդ աշխարհամարտում զոհվածների	1977 թ.	Գյուղի մոտ	S	քանդակագործ՝ Ֆ. Ասատրյան

ՀՀ Կառավարության 2008թ. օգոստոսի 14-ին թիվ 967-Ն որոշմամբ հաստատված՝ ՀՀ բնության հուշարձանների ցանկի համաձայն, Մխչյան համայնքում երկրաբանական հուշարձաններ չկան:

9. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Սույն Հայտում հատկորոշված են ընդհանուր բնույթի բնապահպանական միջոցառումները: Ստորև Աղյուսակ 17-ում առաջարկվում է բնապահպանական միջոցառումների ծրագիր, որում ներկայացված են նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում տարաբնույթ մեղմացնող/նվազեցնող գործողություններ/միջոցառումներ:

Աղյուսակ 17. Բնապահպանական միջոցառումների ծրագիր

Շրջակա միջավայրի հարաչափեր	Միջոցառումներ	Պատասխանատու	Վերահսկող	Արժեքը
1. Օդի աղտոտում	<ul style="list-style-type: none"> Շին.տեխնիկայի կանոնավոր ստուգում և տեխնիկական սպասարկում Շինանյութերի և գրունտի ծածկում անթափանց թաղանթներով Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների դեպքում աշխատանքների դադարում Տեղանքում շինարարական նյութերի և թափոնի պահման արգելում 	Կապալառու	Սեփականատիրոջ ներկայացուցիչ	Ներառված է ծախսերի մեջ
2. Թափոններ	<ul style="list-style-type: none"> Փորված գրունտի օգտագործում որպես ետլիցք և հարթեցման նպատակով Առանձին հավաքել շինարարական և կենցաղային աղբը Կնքել պայմանագիր Արտաշատ քաղաքի աղբահանող կազմակերպության հետ կենցաղային և շինարարական աղբի հեռու քաղաքային աղբավայրում տեղադրման համար 	Կապալառու	Սեփականատիրոջ ներկայացուցիչ	Ներառված է ծախսերի մեջ
3. Հողի աղտոտում	<ul style="list-style-type: none"> Շին.տեխնիկայի կանոնավոր ստուգում և տեխնիկական սպասարկում Բնահողի պահում շին.հարթակում ծածկված վիճակում՝ մինչ օգտագործումը Տարածքում բոլոր տեսակի հեղուկ նյութերի և քսուքների պահման արգելում Աշխատանքների ավարտից հետո տարածքը հարթեցում և բարեկարգում 	Կապալառու	Սեփականատիրոջ ներկայացուցիչ	Ներառված է ծախսերի մեջ
4. Աղմուկ և թրթռում	<ul style="list-style-type: none"> Գիշերվա ընթացքում շինարարական աշխատանքների դադարեցում Շինարարական տեխնիկայի կանոնավոր ստուգում և տեխնիկական սպասարկում Աշխատողների համար աղմուկի մակարդակը պետք է պահպանվի 80 dB (A)-ից ցածր: Այս արժեքը գերազանցելու դեպքում աշխատողներին պետք է տրամադրվեն հատուկ պաշտպանիչ ականջակալներ 	Կապալառու	Սեփականատիրոջ ներկայացուցիչ	Ներառված է ծախսերի մեջ
5. Բուսական աշխարհի պաշտպանություն	<ul style="list-style-type: none"> Աշխատանքների իրականացման ընթացքում չօգտագործել արգելված թունաքիմիկատներ Մինչ աշխատանքների մեկնարկը 	Կապալառու	Սեփականատիրոջ ներկայացուցիչ	Ներառված է ծախսերի մեջ

Շրջակա միջավայրի հարաչափեր	Միջոցառումներ	Պատասխանատու	Վերահսկող	Արժեքը
	<p>իրականացնել տարածքի կենսաբազմազանության ուսումնասիրություն, կարմիրգրքյան տեսակների հայտնաբերման դեպքում իրականացնել դրանց վերատնկում նմանատիպ բնակլիմայական պայմաններ ունեցող վայրերում</p>			
<p>6. Աշխատանքային միջավայր</p>	<ul style="list-style-type: none"> • Աշխատանքների սանիտարական պայմանների ապահովում, ներառյալ լվացարաններ, պետքարաններ և սնունդ ընդունման սենյակներ • Անհատական պաշտպանության միջոցների՝ արտահագուստի, սաղավարտների, դիմակների, ակնոցների և այլնի տրամադրում • Առաջին բուժօգնության դեղորայքի ապահովում • Աշխատանքի անվտանգության գծով հրահանգավորում աշխատողների հետ 	<p>Կապալառու</p>	<p>Սեփականատիրոջ ներկայացուցիչ</p>	<p>Ներառված է ծախսերի մեջ</p>
<p>7. Վթարներ</p>	<ul style="list-style-type: none"> • Շինարարական մեքենաների շահագործման պատշաճ կառավարում • Շրջակա բուժկենտրոնների նույնականացում՝ վնասվածք ստացած աշխատողներին հրատապ բուժօգնություն ցուցաբերելու համար • Շինարարական մեքենաների վարորդների հրահանգավորում՝ սահմանված երթուղիներին և արագությանը համապատասխանեցնելու համար • Վարորդների առողջության բուժ. գնում 	<p>Կապալառու</p>	<p>Սեփականատիրոջ ներկայացուցիչ</p>	<p>Ներառված է ծախսերի մեջ</p>



"ՀՀ Արարատի մարզի Յ. Մխչյան, Մխչյան-Յովտաշեն ճանապարհի 1 հողամասում գյուղմթերքների շուկա, առևտրի և սպասարկման կենտրոնի կառուցման" աշխատանքային նախագիծ

Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Հավելվածների մաս



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

Յավելված 1



Կադաստրի կոմիտե

Սույն վկայականով հաստատվում է 7 հոկտեմբերի 2019 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)

ՍԱՐԳԻՍ ՆԵՐՍԻՍՅԱՆ ԱՐԱՅԻԿԻ

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Արարատ, համայնք Մխչյան Մխչյան-Հովտաշեն ճանապարհ 1 հողամաս

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՏԱԹՂԹԵՐԸ

Անշարժ գույքի առուվանճառքի պայմանագիր 18/06/2019թ, Համայնքի ավագանու 20.09.2019թ. թիվ 26 որոշում

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 03-059-0238-0004

Մակերեսի չափը (հա)՝ 5.6

Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Հասարակական կառուցապատման

Գրանցված իրավունքի տեսակը՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ N 07102019-03-0048, գաղտնաբառ՝ RSNMKMYL1IB3

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

~~Լեւոնյանի Տարա Երեշյանի համայնք~~
(մարզը, համայնքը)

ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅՆՏՎՈՒԹՅՈՒՆ

(ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ)

N 22 08 / 10 2019 թ.

Օբյեկտ

~~Գյուղ. Տրեքի ներքի շուխա, առևտրի և ապահովության~~

(օբյեկտի անվանումը, կառուցում, վերակառուցում, ուժեղացում, վերականգնում, գործառնական նշանակության փոփոխություն)

~~առևտրի ծառայություն~~

(հակիրճ բնորոշումը, հզորությունը)

~~կառուցելու~~ նախագծային փաստաթղթերի մշակման համար:

միակայնության աստիճանը (կատեգորիան), նախագծման փուլերը և այլն)

Գտնվելու վայրը

~~Լեւոնյանի Տարա Երեշյանի գյուղում~~

(մարզի, համայնքի, փողոցի անվանումները, շենքի համարը, հողամասի ծածկագիրը)

Կառուցապատող

~~Ներքինիության մարզի Լեւոնյանի բնակավայր~~

(կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, ֆիզիկական անձի անունը, ազգանունը,

~~Լեւոնյանի Տարա Երեշյանի~~

բնակության վայրը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն)

Առաջադրանքի տրամադրման հիմքը

~~կառուցապատողի հարցի վրա~~

(կառուցապատման նպատակով ՀՀ օրենսդրությամբ սահմանված

~~առ. իրավունքի N 07/02019-03-0048 վկայական~~

կարգով հողամասի տրամադրման, անշարժ գույքի փոփոխման իրավունքը հաստատող անհրաժեշտ փաստաթղթերը)

Առաջադրանքի գործողության ժամկետը

~~կառուցելու~~

(N 1 հավելվածի 32-րդ կետին համապատասխան)

ՆԱԽԱԳԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)

1. Հողամասը գտնվում է Կապույտաբլուրի համայնքում, Զեյնեբեկյան և Կարապետյան փողոցների խաչմերուկում
(հողամասի դիրքը քաղաքաշինական միջավայրում, դրա նախատեսված և գործառնական նշանակությունը)

2. (*) Հողամասի չափերը 5, 0 հա
(հողամասի սահմանները՝ կողորդիստային նշահարմամբ, մակերեսը (հա))

3. Հողամասի առկա վիճակը Կապույտաբլուրի համայնքում, Զեյնեբեկյան և Կարապետյան փողոցների խաչմերուկում
(ռեյիտի քաղաքագիտ. շենքերի (այդ թվում՝ քանդակարված) առկայությունը (օգտագործումը, նշանակությունը, հարկայնությունը, շինարարական նյութերը և այլն), կանաչապատումը, բարեկարգումը և այլն)

4. (*) Տրանսպորտային պայմանները Արևիկա Բուսանյութ
(ճանապարհների առկայությունը, երկաթուղային տրանսպորտի մոտեցումները և այլն)

5. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ (ջրամատակարարման, կոյուղու, գազամատակարարման, տաք ջրի մատակարարման, էլեկտրամատակարարման, էլեկտրոնային հաղորդակցության համակարգեր)
—
(Նախագծվող հողամասով կամ կից տարածքով անցնող ինժեներական ենթակառուցվածքները, այդ թվում՝ ստորգետնյա)

6. (*) Կից հողամասեր Գյուղ. Զեյնեբեկյան և Կարապետյան փողոցներ
(կից հողօգտագործումների անվանումը և դրանց սահմանները՝ համաձայն ներկայացված սխեմայի)

7. Բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների տարածքներ (պահպանական գոտիներ) ՀԿԱԸ
(հուշարձանի անվանումը, կարգավիճակը և այլն)

8. (*) Հատակագծային սահմանափակումներ ՀԿԱԸ
(տեղանքում գործող արտադրական, պաշտպանվող օբյեկտների, ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքների և այլ օբյեկտների նկատմամբ սահմանափակումները, այդ թվում՝ սերվիտուտները)

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՊԱՅԱՆՁՆԵՐԸ

(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)

9. Ճարտարապետահատակագծային պահանջներ Գ.Գ. Նուրբեկյանի անվան ճարտարապետության օրենսդրության և Նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներից, առկա քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի դրույթներից կամ դրանց բացակայության դեպքում՝ կազմավորված (կազմավորվող) քաղաքաշինական միջավայրի պայմաններից

9.1. (*) օբյեկտի հեռավորությունը կարմիր գծից (մետր) Թեյմուր Բեյի անվան հեռավորություն

9.2. (*) հեռավորությունը հարևան հողակտորներից (օբյեկտներից) (մետր)

բացակայում է

9.3. թույլատրելի բարձրությունը (մետր)

9.4. կառուցապատման խտության գործակիցը (կառույցի (կառույցների) ընդհանուր մակերեսի հարաբերությունը հողամասի մակերեսին)

9.5. կառուցապատման տոկոսը (կառուցապատվող (անջրանցիկ) տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով (%))

9.6. կանաչապատման տոկոսը (կանաչապատ տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով (%))

9.7. այլ պահանջներ

չկա

10. Հողամասում գտնվող շենքերի ու շինությունների քանդման կամ տեղափոխման (ապամոնտաժման) պայմանները և աշխատանքների հերթականությունը

11. Ստորգետնյա, կիսանկուղի և առաջին հարկերի տարածքների օգտագործման պայմանները

12. (*) հնժեներական ցանցեր և սարքավորումներ

Պահանջներ՝ գոյություն ունեցող և նախագծվող ենթակառուցվածքների ու ցանցերի նկատմամբ

12.1. (*) ջրամատակարարում, կոյուղի, տաք ջրի մատակարարում

Կցվում է

(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.2. (*) էլեկտրամատակարարում

Կցվում է

(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.3. (*) գազամատակարարում

Կցվում է

(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.4. (*) էլեկտրոնային հաղորդակցության մալուխատար կոյուղու (ներառյալ դիտահորը)

Կցվում է

(համաձայն N 1 հավելվածի 58-րդ կետի 2-րդ ենթակետով)

տեղադիրքը

սահմանված ելակետային տվյալների)

12.5. թույլ հոսանքներ

12.6. աղբահանություն

13. Տարածքի ինժեներական
նախապատրաստում

14. Բարեկարգում

15. Շինարարական նյութեր

16. Պաշտպանական կառույցներ

17. Հակահրդեհային պահանջներ

18. Հաշմանդամների և բնակչության
սակավաշարժ խմբերի
պաշտպանության միջոցառումներ

19. Շրջակա միջավայրի պահպանում

20. Շինարարության կազմակերպում

21. Առաջադրանքի գործողության
ժամկետը և նախագծի մշակման
փուլերը

22. Նախագծային փաստաթղթերի
փորձաքննությանը ներկայացվող
պահանջներ

23. Միջանկյալ համաձայնեցում

Կարմիր Սարգսյան
(ռեզիդի կազմակերպման, քրտոհոսանքի, ինժեներական
պաշտպանության միջոցառումները)

Կարմիր Սարգսյան
(լանդշաֆտային պլանավորման վերաբերյալ պահանջները,
կանաչապատում, ճարտարապետական փոքր ձևեր,
ցանկապատում, գովազդ և այլն)

Կարմիր Սարգսյան
(շինարարական նյութերի օգտագործման վերաբերյալ
առաջարկությունները)

(արտակարգ իրավիճակներում մարդկանց և օբյեկտների
պաշտպանության միջոցառումները)

Կարմիր Սարգսյան
(հրդեհակիրճային անվտանգության ապահովման միջոցառումները)

Կարմիր Սարգսյան

Կարմիր Սարգսյան
(շրջակա միջավայրը վտանգավոր ազդեցությունից
բացառելու միջոցառումները)

(առաջարկություններ շինարարության հետ կապված
անբարենպաստ ազդեցության բացառման, քաղաքային
տնտեսության և տրանսպորտի անխափան աշխատանքի
ապահովման վերաբերյալ)

4 ամիս
(նշվում են առաջադրանքի գործողության ժամկետը և
նախագծի մշակման փուլերը)

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Դ. Դ. Կարմիր Սարգսյան
(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված
փորձաքննության տեսակը կամ նախագծողի երաշխավորագիրը
հղում կատարելով համապատասխան իրավական ակտին)

Կարմիր Սարգսյան

Դ. Դ. Կարմիր Սարգսյան
(իրավասու մարմնի կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ
նախատեսված դեպքերում շահագրգիռ մարմինների հետ ելքային
նախագծի նախնական համաձայնեցում, նշվում է նաև առաջադրանքի
փոփոխման հնարավորությունը՝ N 1 հավելվածի 89-րդ կետով
նախատեսված դեպքում)

24. Հասարակական քննարկումներ

Հ. Կարամյան
(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված
դեպերտում և կարգով)

25. Համաձայնեցումների կամ
մասնագիտական
եզրակացությունների ստացում

(Նշվում են տվյալ օբյեկտի համաձայնեցման՝ օրենքով սահմանված
պահանջները՝ հուշարձանների ու բնության պահպանության և այլ լիազորված
մարմինների հետ, ինչպես նաև N 1 հավելվածի 56-րդ կետով սահմանված
դեպերտում՝ ինժեներական ենթակառուցվածքի սեփականատիրոջ
(օգտագործողի) հետ)


26. Փոստային բաժանորդային
պահարանների տեղադրում

27. Այլ պայմաններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ Կարմիր Տարբեր Արշակունի ՀԱՄԱՅՆՔԻ



Դ. Կարամյան
(ստորագրությունը, անունը, ազգանունը)



ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻԻՔԻ ՄԱՐԶ «ԱՐՄԱՆ-ԵՐԵՄ» ՍՊԸ
РА ГЕГАРКУНИКСКАЯ ОБЛАСТЬ ООО "АРМАН-ЕРЕМ"
RA MARZ GEGHARKUNIK LTD "ARMAN-EREM"

ք. Գավառ, Արծվաքար թաղ., հեռ. (093) 19-66-68
г. Гавар. уч. Арцвакар тел., (093) 19-66-68
с. Gavar. si. Artcvacar, tel. (093) 19-66-68

էլ. փոստ.gexarquniqnairi@mail.ru

№ 03/19-467

<<15>>հոկտեմբերի 2019թ.


<<Գ. Վ. Շիննախագիծ>>ՍՊԸ տնօրեն՝
պարոն Գ. Եղիազարյանին

<<Արման-Երեմ>>ՍՊԸ-ն (ՀՀ քաղաքաշինության Կոմիտեի լիցենզիա № 16992) դիտարկելով
<< ՀՀ Արարատի մարզի Հ. Մխչյան, Մխչյան-Չովոտաշեն ճանապարհի 1 հողամաս, Գյուղ մթերքների
շուկա, առևտրի և սպասարկման կենտրոնի կառուցման>> աշխատանքների նախագծային
փաստաթղթերը երաշխավորում է համապատասխանությունը ՀՀ օրենսդրությամբ և
նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին:

Առդիր՝ եզրակացություն 2 թերթից:

Տնօրեն՝

Յու. Ավետիսյան



Իրադրային հատակագիծ

Հավելված 5



Պայմանանշաններ

- Նախատեսվող գործունեության վայրը
- ■ — Էլեկտրամատակարարման օդային գծեր
- Անձրևաջրերի հեռացման ջրանցք
- Ջրատար խողովակ
- Միջհամայնքային ավտոճանապարհ
- Մ-2 Երևան-Մեղրի միջպետական ավտոճանապարհ